



Բաց Հասարակության
Հիմնադրամներ
Հայաստան



Հ Ա Ն Ր Ա Յ Ի Ն
Ք Ա Ր Ա Ք Ա Ն Ա Ն Ո Ւ Յ Յ Ա Ն
Ի Ն Ս Տ Ի Տ Ո Ւ Տ



«Չինված ուժերում գրանցված միջադեպերի առթիվ հարուցված քրեական վարույթների շրջանակներում որպես կասկածյալ եւ վկա ռազմական ոստիկանություն բերված անձանց խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովումը» նախագիծն իրականացվում է «Դրական փոփոխություն» քաղաքացիական հասարակության հզորացման միջոցով» ծրագրի շրջանակներում տրամադրված դրամաշնորհի միջոցներով:

«Դրական փոփոխություն» քաղաքացիական հասարակության հզորացման միջոցով» ծրագիրն իրականացնում է ԲՀՀ-Հայաստանը՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ համագործակցելով Հանրային քաղաքականության ինստիտուտ եւ Իրազեկ քաղաքացիների միավորում կազմակերպությունների հետ:



© 2020. Չեկոյցը իրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից

Խմբագրակազմ

Ծրագրի տնօրեն՝ **Էդգար Խայատրյան**
Ծրագրի համակարգող՝ **Մանե Գրիգորյան**
Ծրագրի փորձագետ՝ **Մուշեղ Շուշանյան**
Խմբագիր՝ **Վահագն Անտոնյան**
Անվերեն տեքստի թարգմանություն՝ **Լուսինե Պողոսյան**

Հատուկ շնորհակալություն Արաքս Մելքոնյանին՝ զեկոյցի նախապատրաստման աշխատանքներին նպաստելու համար:

Նկարագրողումը՝ **Ալեքսեյ Յորշ**,
Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն
<https://issuu.com/ersh>

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 2002, ք. Վանաձոր,
Մյասնիկյան 12, բն. 40, «ԽԵ» գրասենյակ

Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632

Էլ. փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am

Կայք՝ <http://www.peacedialogue.am>;
<http://www.safesoldiers.am>

Այս իրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության եւ Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ֆինանսական աջակցությամբ:

Հրապարակման բովանդակության պատասխանատվությունը կրում է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունը եւ այն չի արտացոլում Եվրոպական միության եւ Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի տեսակետները:

Զինված ուժերում գրանցված Տիգրայեցիների
առթիվ հարուցված քրեական վարույթների շրջանակներում
որպես կասկածյալ եւ վկա ռազմական ոստիկանություն
բերված անձանց խոշտանգումներից զերծ մնալու
իրավունքի ապահովումը



Զեկու-39

Զինված ուժերում
գրանցված միջադեպերի
առթիվ հարուցված
քրեական վարույթների
շրջանակներում որպես
կասկածյալ եւ վկա
ռազմական ոստիկանություն
բերված անձանց
խոշտանգումներից
զերծ մնալու իրավունքի
ապահովումը

ԶԵԿՈՒ 39





**Բաց Հասարակության
Հիմնադրամներ
Հայաստան**



**Հ Ա Ն Դ Ա Յ Ի Ն
Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն Ա Ռ Ո Յ Ա Ն
Ի Ն Ս Ի Տ Ո Ւ Տ**



«Զինված ուժերում գրանցված միջադեպերի աղթիվ հարուցված քրեական վարույթների շրջանակներում որպես կասկածյալ եւ վկա ռազմական ոստիկանություն բերված անձանց խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովումը» նախագիծն իրականացվում է «Դրական փոփոխություն՝ քաղաքացիական հասարակության հզորացման միջոցով» ծրագրի շրջանակներում տրամադրված դրամաշնորհի միջոցներով:

«Դրական փոփոխություն՝ քաղաքացիական հասարակության հզորացման միջոցով» ծրագիրն իրականացնում է ԲՀՀ-Հայաստանը՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ համագործակցելով Հանրային քաղաքականության ինստիտուտ եւ Իրազեկ քաղաքացիների միավորում կազմակերպությունների հետ:



© 2020. Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից:

Խմբագրակազմ

Ծրագրի տնօրեն՝ Էդգար Խաչատրյան
Ծրագրի համակարգող՝ Մանե Գրիգորյան
Ծրագրի փորձագետ՝ Մուշեղ Շուշանյան
Խմբագիր՝ Վահագն Անտոնյան
Անգլերեն տեքստի թարգմանություն՝ Լուսինե Պողոսյան

Հատուկ շնորհակալություն Արաքս Մելքոնյանին՝ զեկույցի նախապատրաստման աշխատանքներին նպաստելու համար:

Նկարագրողունը՝ Ալեքսեյ Յորշ,
Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն
<https://issuu.com/ersh>

© 2020 «Խաղաղության երկխոսություն»

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 2002, ք. Վանաձոր,
Մյասնիկյան 12, բն. 40, «ԽԵ» գրասենյակ

Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632

Էլ. փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am

Կայք՝ <http://www.peacedialogue.am>;
<http://www.safesoldiers.am>

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության եւ Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ֆինանսական աջակցությամբ:

Հրապարակման բովանդակության պատասխանատվությունը կրում է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունը եւ այն չի արտացոլում Եվրոպական միության եւ Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի տեսակետները:

Վանաձոր, 2020

Բովանդակություն

Հապավումների ցանկ	4
Նախաբան	5
Ծրագրի մեթոդաբանություն	8
Խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովումը երաշխավորող միջազգային իրավական մեխանիզմները	10
Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի զեկույցները եւ առաջարկները	20
Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցները եւ հաղորդումները	23
Խոշտանգումների արգելքի վերաբերյալ ներպետական օրենսդրության ուսումնասիրությունը	28
ՌՌ բերված անձանց նկատմամբ անմարդկային կամ դժան վերաբերմունքի կամ խոշտանգումների վերաբերյալ հայտնի դարձած որոշ փաստեր	37
Եզրակացություններ	42
ԶՌԻ-ում գրանցված միջադեպերի արդյունքում, քրեական վարույթների շրջանակներում որպես կասկածյալ եւ վկա ՌՌ բերված անձանց խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովմանն ուղղված առաջարկներ	49

Հապավումներ

ԽԵ	«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ՌՌ	Ռազմական ոստիկանություն
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ԶՈւ	Զինված ուժեր
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպություն
ԱՀՏԱ	Անձնակազմի հետ տարվող աշխատանքների վարչություն
ԽԴԿ	Խոշտանգումների դեմ կոմիտե
ԽԿԿ	Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե
ԶԲԳՎ	Զինվորական քննչական գլխավոր վարչություն

Ներածություն

Զինված ուժերում (ԶՈւ) մարդու իրավունքների հիմնախնդիրները միշտ եղել են իրավապաշտպանների ուշադրության կենտրոնում: Վերջին տարիներին այս ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները հաճախ են բարձրաձայնում, որ բանակում մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, ամրագրված ինչպես միջազգային, այնպես էլ՝ ներպետական իրավական ակտերում, կոպտորեն ոտնահարվում են: «Խաղաղության երկխոսություն» (ԽԵ) հասարակական կազմակերպության մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում երկարամյա գործունեությունից բխող փորձը ցույց է տալիս, որ ռազմական ոստիկանության կայազորային մեկուսարաններ բերման ենթարկված զինծառայողներն ու քաղաքացիներն առավել խոցելի են իրավական պաշտպանվածության եւ, հատկապես, խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովման տեսանկյունից:

2012թ.-ից ԽԵ-ն նախաքննության եւ դատաքննության փուլերում իրավական աջակցություն է ցուցաբերում զինված ուժերում ոչ մարտական պայմաններում մահացած զինծառայողների մի շարք ընտանիքների, ինչպես նաեւ իրականացնում բանակում տեղի ունեցած միջադեպերի առիթով հարուցված քրեական վարույթների շրջանակներում մարդու իրավունքների խախտման փաստերով քաղաքացիների դատական ատյաններում ներկայացուցչությունն ու պաշտպանությունը: Վերոնշյալ քրեական գործերի շրջանակներում կազմակերպությունն արձանագրել է, որ քրեական վարույթն իրականացնող մարմինները հաճախ չեն ապահովել արդյունավետ քննության կարելորագույն չափորոշիչներից մեկը. **գործով անցնող վկաները, դատավարության մյուս մասնակիցները ենթարկվել են դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի:**

Քրեական վարույթների շրջանակներում կասկածյալի կամ վկայի կարգավիճակով ռազմական ոստիկանություն բերված անձանց նկատմամբ խոշտանգումը, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող գործողությունները կիրառվել են ինքնախոստովանական ցուցմունք կորզելու կամ ճնշելու նպատակով՝ ֆիզիկական ու հոգեկան ցավի միջոցով ցանկալի տեղեկություններ կամ վկայություններ ստանալու համար: ՀՀ ռազմական ոստիկանության պաշտոնատար անձանց կողմից զինծառայողների խոշտանգման՝ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու առանձին դեպքերի հետ կապված խնդիրները բարձրացվել են նաեւ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) զեկույցներում:

Փորձը ցույց է տալիս, որ խոշտանգումների վերաբերյալ քրեական գործերը միայն եզակի դեպքերում են հասնում դատարաններ, ինչը պայմանավորված է նաեւ եղելությունն ապացուցելու դժվարությամբ, գրեթե՝ անհնարինությամբ: Շատ դեպքերում արդարադատություն իրականացնող ինստիտուտների նկատմամբ անվստահության արդյունքում քաղաքացիները նախընտրում են լռել իրենց նկատմամբ իրականացված խոշտանգումների դեպքերի վերաբերյալ, իսկ մեղադրյալի կարգավիճակում գտնվողները կարծում են, որ նման խնդիրների բարձրաձայնումը կարող է ավելի վատթարացնել իրենց վիճակը. արատավոր պրակտիկան ցույց է տալիս, որ նման դեպքերում դեռ

իրենք են ստիպված լինում ապացուցել իրենց նկատմամբ տեղի ունեցած խոշտանգման փաստը: Բավական է միայն նշել, որ Հայաստանում դեռևս ոչ մի պաշտոնյա պատասխանատվություն չի կրել այլ անձի նկատմամբ վատ վերաբերմունքի եւ խոշտանգումների համար, անգամ այն դեպքերում, երբ խոշտանգման եւ վատ վերաբերմունքի դրսևորման փաստը ճանաչվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) կողմից: 2020թ. հունվարի դրությամբ ՀՀ դատարանի կողմից արձանագրվել է քաղաքացու խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի խախտման ընդամենը մեկ դեպք. 2019թ.-ի հունվարի 8-ին ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է փաստացի աննախադեպ որոշում՝ ճանաչել է 2015 թվականին բանակից հոգեկան խնդիրներով տուն վերադարձած Արթուր Հակոբյանի խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի խախտումը¹: Չնայած դատարանի որոշմանը՝ մինչ այժմ այդ գործով մեղադրյալ անգամ չկա:

Խնդիրն էլ ավելի է բարդանում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հանրային իրազեկության ցածր մակարդակի արդյունքում հասարակության լայն շերտերի մոտ (թե՛ պաշտոնական շրջանակներում, թե՛ քաղաքացիների մոտ) չի ամրապնդվել խոշտանգումների, վատ վերաբերմունքի կամ արժանապատվությունը նվաստացնող գործողությունների նկատմամբ անհանդուրժողականությունը. մարդիկ այս երեւոյթները համարում են միանգամայն հասկանալի, ինչ-որ տեղ ընդունելի եւ հանդուրժողաբար են տրամադրված:

Դեռևս 2015 թ.-ին ՀՀ կառավարությունը խոստովանում էր, որ գործող «Ռազմական ոստիկանության մասին» օրենքում կարգավորումներ սահմանված չեն կարգապահական վաշտերում, կարգապահական գումարտակում եւ կարգապահական մեկուսարաններում² այդ կառույցի գործառույթների վերաբերյալ: Չնայած այն բանին, որ 2017 թ.-ին ընդունված «Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքով փորձ արվեց որոշակի հստակություն մտցնել կայազորային մեկուսարաններում ռազմական ոստիկանության գործառույթների վերաբերյալ, ոլորտը կարգավորող նոր օրենք, սակայն, չի ընդունվել: Արդյունքում՝ մինչ այժմ առկա են անհստակություններ այս կառույցի դերի եւ բովանդակության վերաբերյալ:

Բացի օրենսդրական հստակ կարգավորումների բացակայությունից, ոլորտի բարեփոխմանը խոչընդոտում է նաեւ համակարգի փակ լինելը: Պաշտպանության նախարարության ենթակայության տակ գործող կառույց հանդիսանալով՝ ռազմական ոստիկանությունը դուրս է մնում հանրային վերահսկողությունից: Կազմակերպությանը հայտնի են դեպքեր, երբ փաստաբանները չեն կարողացել մուտք գործել ՌՌ բաժին՝ քրեական գործով ՌՌ-ում գտնվող քաղաքացու շահերի պաշտպանության նպատակով: Ավելին, արձանագրված է դեպք, երբ անգամ ՄԻՊ աշխատակիցների մուտքը ՌՌ բաժին արգելվել է այդ կառույցի աշխատակիցների կողմից³:

2019 թվականի հունվարից ԽԵ-ն սկսեց իրականացնել «ԶՈՒ-ում տեղի ունեցած հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթների

1. «Վճռաբեկ դատարանը ճանաչել է զինծառայողի՝ խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի խախտումը» հոդվածը. <https://www.azatutyun.am/a/29697753.html>
2. 2012 թվականից ՀՀ ՊՆ կարգապահական մեկուսարանները փոխարինվել են կարգապահական վաշտերով, սակայն ռազմական ոստիկանություններում գործում են ՌՌ կայազորային մեկուսարաններ:
3. «Քննչական գործողություններ կատարելու նպատակով զինվորին տեղափոխել են Նոյեմբերյան» հոդվածը. [hetq.am. https://tini.to/43X](https://tini.to/43X)

շրջանակներում ներգրավված անձանց «խոշտանգումների արգելում» իրավունքի ապահովումը» ծրագիրը, որն ուղղված է ՀՀ ՁՈՒ ռազմական ոստիկանության բաժիններում քրեական վարույթների շրջանակներում ներգրավված անձանց նկատմամբ խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերի կանխմանը:

Նախանշված նպատակին հասնելու համար կազմակերպությունը ձգտել է քաղաքացիների խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի պաշտպանության տեսանկյունից վերհանել ոլորտը կարգավորող գործող ներպետական օրենսդրության բացերն ու բացահայտել գոյություն ունեցող իրավական ակտերի անհամապատասխանությունը ՀՀ կողմից վավերացրած միջազգային փաստաթղթերի եւ ոլորտում ներգրավված միջազգային կառույցների կողմից ներկայացված առաջարկների հետ: Բացի այդ, ծրագրի շրջանակներում փորձ է արվել ՀՀ ՁՈՒ ռազմական ոստիկանության բաժիններում քրեական վարույթների շրջանակներում ներգրավված անձանց նկատմամբ խոշտանգումների կազմակերպությանը հայտնի դարձած դեպքերի վերլուծության հիման վրա վերհանել ոլորտում գոյություն ունեցող խնդիրներն ու դրանց պատճառները, հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկություններ մշակել եւ դրանք ոլորտի պատասխանատուներին ներկայացնել:

Սույն զեկույցը ծրագրի շրջանակներում իրականացված գործողությունների արդյունք է: Նպատակ ունի բարձրացնել թեմայի շուրջ հանրության իրազեկության մակարդակն ու իրավակիրառ պրակտիկայում դրական փոփոխությունների խթան հանդիսանալ:

Ծրագրի մեթոդաբանություն

Ծրագրի շրջանակներում նախատեսվող գործողություններն իրականացվել են չորս փուլով.

1. Իրավական փաստաթղթերի ուսումնասիրություն

Ծրագրի այս փուլում ուսումնասիրվել եւ վերլուծվել են՝

- ներպետական օրենսդրական ակտեր՝ ՀՀ միջազգային պարտավորությունների լույսի ներքո,
- ՄԻԵԴ վճիռներ, որոնցում Դատարանը ճանաչել է Դիմողների խոշտանգումներից զերծ մնալու եւ գործի արդյունավետ քննության իրավունքի խախտման փաստերը,
- Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի տարբեր տարիների զեկույցներ, որոնցում կոմիտեն անդրադարձել է թեմային առնչվող խնդիրներին,
- Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներն ու զեկույցները:

2. Տեղեկությունների հավաքագրում

Հնարավոր բոլոր բաց աղբյուրներից տեղեկություններ են հավաքագրվել ՌՈՒ քաժիներում քաղաքացիների նկատմամբ խոշտանգումների դեպքերի վերաբերյալ:

2012 թ.-ից կազմակերպությունն իրավական աջակցություն է ցուցաբերում զինված ուժերում ոչ մարտական պայմաններում մահացած զինձառայողների իրավահաջորդներին, իսկ կազմակերպության փորձագետ Ռուբեն Մարտիրոսյանը մի շարք քրեական գործերով ներգրավված է որպես տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչ. դեպքերի մի մասը ԽԵ-ին հայտնի է դարձել հենց նշված քրեական գործերի ուսումնասիրության արդյունքում:

Նյութերի մյուս մասն անձնակազմին է տրամադրվել ԶՈՒ-ում տեղի ունեցած հանցագործությունների առթիվ հարուցված այլ քրեական գործերի շրջանակներում որպես տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչ ներգրավված կամ վարույթների շրջանակներում մարդու իրավունքների խախտման փաստերով դատական ատյաններում քաղաքացիների ներկայացուցչությունն ու պաշտպանությունն իրականացնող, ծրագրի փորձագետ, փաստաբան Մուշեղ Շուշանյանի կողմից:

3. Հարցազրույցների իրականացում

Ձեռք բերված նյութերի համակարգումից հետո ծրագրի անձնակազմը փորձել է կապ հաստատել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերով մի քանի քաղաքացիների կամ վերջիններիս ներկայացուցիչների հետ՝ սկզբնաղբյուրից առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար: Այդ նպատակով կազմվել է քրեական վարույթների ընթացքում որպես վկա կամ կասկածյալ ՌՈՒ տարված եւ այնտեղ խոշտանգումների եւ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկված

անձանց հետ անցկացվելիք հարցազրույցի հարցաշար: Ծրագրի անձնակազմը ջանքեր է գործադրել այդ անձանց հայտնաբերելու, նրանց հետ հանդիպելու ուղղությամբ: Հաշվի առնելով այն փաստը, որ խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի զոհերը հիմնականում խուսափում են բարձրաձայնել իրենց հետ կատարվածը կամ պարզապես ձգտում են մոռանալ այն, հաջողվել է հարցազրույցին մասնակցության համաձայնություն ստանալ միայն մեկ անձից: Վերջինս մասնակցել է հարցազրույցին եւ պատմել իր հետ կատարվածը: Այնուամենայնիվ, ծրագրի անձնակազմը ցանկալի տեղեկությունները կարողացավ ձեռք բերել նաեւ մի շարք գործերով տուժողներին իրավական աջակցություն ցուցաբերած կամ նրանց լիազորված ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանների հայտնած փաստերի հիման վրա:

4. Ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմվել է ոլորտի բարեփոխմանն ուղղված առաջարկությունների փաթեթ

Ուսումնասիրելով եւ վերլուծելով վերը նկարագրված իրավիճակի հնարավոր պատճառները, ներառյալ՝ օրենսդրական կարգավորման բացերն ու իրավակիրառ պրակտիկայի խնդիրները, ծրագրի անձնակազմը մշակել է ՌՌ տարվող զինծառայողների խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովման երաշխիքների ստեղծմանն ուղղված առաջարկություններ: Ծրագրի ավարտին դրանք կտրամադրվեն ոլորտի պատասխանատուներին՝ բարեփոխումներ նախաձեռնելու եւ ՀՀ ՁՈՒ-ռազմական ոստիկանության բաժիններում քրեական վարույթների շրջանակներում ներգրավված անձանց նկատմամբ խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերի կանխման նպատակով:

Խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովումը երաշխավորող միջազգային իրավական մեխանիզմները

Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքն ամրագրված է մարդու իրավունքների եւ մարդասիրական իրավունքին առնչվող մի շարք միջազգային փաստաթղթերում եւ համարվում է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունք: Այդ արգելքը բացարձակ է եւ հանդիսանում է ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներից մեկը: Ըստ միջազգային չափանիշների՝ այս արգելքից չի թույլատրվում շեղվել նույնիսկ արտակարգ իրավիճակներում: Դրա շրջանցումը չի կարող արդարացվել եւ հիմնավորվել պետության ազգային անվտանգության շահերով կամ ահաբեկչության, հանցավորության դեմ պայքարի շահերից թելադրվող անհրաժեշտությամբ:

Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքը հռչակված է մասնավորապես.

- 1948թ. դեկտեմբերի 10-ին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի⁴ 5-րդ հոդվածում,
- 1950թ. նոյեմբերի 4-ին ընդունված Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի⁵ (այլ կերպ ասած՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ)) 3-րդ հոդվածում,
- 1966թ. դեկտեմբերի 16-ին ընդունված Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի⁶ 7-րդ հոդվածում,
- 1987թ. նոյեմբերի 26-ին ընդունված Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիայում⁷:

Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիան (որը հայտնի է

4. 1948թ. դեկտեմբերի 10-ին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր.

http://www.un.org/res/HumanRights/Armenian%20Documents/UDHR_arm.pdf

5. 1950թ. նոյեմբերի 4-ին ընդունված Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=20870>

6. 1966թ. դեկտեմբերի 16-ին ընդունված Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18500>

7. Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիա. https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=81174&fbclid=IwAR2X-KoCbd-FJz_HL0b6_iaTVuREDCLkNLYPvtHMUGnfCnYaBdAsPDSE7Yk

որպես ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիա⁸ (UNCAT)) մարդու իրավունքների միջազգային պայմանագիր է, որի նպատակն է կանխել խոշտանգումները եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատժամիջոցները ամբողջ աշխարհում: 1984թ. դեկտեմբերի 10-ին ընդունված այս կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետը մասնակից պետություններին պարտավորեցնում է ձեռնարկել օրենսդրական, վարչական, դատական կամ այլ արդյունավետ միջոցներ՝ իր իրավագործության ներքո գտնվող ցանկացած տարածքում խոշտանգումների դեպքերը կանխելու համար: Կոնվենցիայի առաջին հոդվածը սահմանում է խոշտանգում եզրույթը, ըստ որի՝ **դա այն գործողությունն է, որով որեւէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդամբ կամ համաձայնությամբ:**

Ըստ վերոնշյալ հոդվածի՝ «խոշտանգում» հասկացության «հիմնական տարրերն» են՝

- **Դիտավորությամբ ուժեղ մտավոր կամ մարմնական ցավ կամ տառապանք պատճառելը՝ պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրա լուռ համաձայնությամբ կամ գիտությամբ,**
- **Հատուկ նպատակի առկայությունը. խոշտանգումն իրականացվում է որոշակի նպատակով, օրինակ՝ տեղեկություն կորզելու, պատժելու կամ վախեցնելու նպատակով:**

Հարկ է նշել, որ երբեմն դժվար է որոշել «խոշտանգում» եւ «այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ» հասկացությունների սահմանները: Այստեղ հաշվի են առնվում յուրաքանչյուր գործի հանգամանքները:

Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը վերաբերվում են դաժան վերաբերմունքին, որը պատճառվում է առանց հատուկ նպատակի, սակայն մտածված կերպով՝ անձին դնելով այնպիսի պայմանների մեջ, որոնք բերում են դաժան վերաբերմունքի կամ ինքնին դաժան վերաբերմունք են: Նվաստացնող վերաբերմունքը խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի ենթարկելու համեմատությամբ պակաս ծանր ցավ կամ տառապանք կարող է պատճառել, սակայն այն վիրավորում եւ նվաստացնում է տուժողին:

Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիան, որը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1993 թվականից, հստակ

8. 1984թ. դեկտեմբերի 10-ին ընդունված Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիա. <https://www.artis.am/DocumentView.aspx?DocID=60506>

պարտավորություններ է սահմանում կոնվենցիայի անդամ պետությունների համար:

Ի թիվս մի շարք այլ պահանջների՝ կոնվենցիան սահմանում է, որ.

- **Ամենից առաջ, պետությունները պարտավոր են զերծ մնալ խոշտանգումներից, ձեռնարկել բոլոր միջոցները դրանք կանխելու համար:**
- **Պետությունները պետք է երաշխավորեն, որ խոշտանգումները, ներառյալ խոշտանգումներին մասնակցությունը եւ հրահրումը, իրենց քրեական օրենսդրությամբ որակված լինեն որպես հանցագործություն:**
- **Պետությունները պարտավոր են խոշտանգումների դեպքերով կատարել արդյունավետ, օբյեկտիվ եւ բազմակողմանի քննություն:**
- **Կոնվենցիան սահմանում է, որ խոշտանգումների արդյունքում արված հայտարարությունները չեն կարող օգտագործվել որպես ապացույց, բացառությամբ այն դեպքերի, երբ դա խոշտանգելու մեջ մեղադրվող անձի դեմ հայտարարություն անելու ապացույց է հանդիսանում:**
- **Պետությունները պարտավոր են խոշտանգումների եւ այլ դաժան վերաբերմունքի արգելքի վերաբերյալ դասընթացներ ապահովել իրավապահ մարմինների, բուժանձնակազմերի եւ այն բոլոր անձանց համար, որոնք առնչվում են ազատագրկման վայրերի աշխատանքին, հարցաքննություններին կամ որեւէ այլ կերպ առնչվում են ազատագրկված անձանց հետ:**
- **Հարցաքննություն վարելու կանոնները եւ ազատագրկվածներին պահելու պայմանները պետք է պարբերաբար վերանայվեն՝ ապահովելով խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի կանխարգելումը:**
- **Պետությունները պարտավոր են հետաքննել խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ դեպքերը, նույնիսկ եթե այդ մասին պաշտոնական բողոք չի ներկայացվել: Անհատներն ունեն խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի վերաբերյալ բողոքների ներկայացման, այդ բողոքների հետաքննության եւ հետագա սպառնալիքներից կամ դաժան վերաբերմունքից պաշտպանության իրավունք:**

Ներկայացված դրույթները կիրառելի են նաեւ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեպքերում, որոնք չեն որակավորվում որպես խոշտանգում, սակայն նույնպես արգելված են: **Այս կապակցությամբ Կոնվենցիայի 16-րդ հոդվածում մասնավորապես ասվում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է իր իրավագործության ներքո գտնվող ցանկացած տարածքում կանխել դաժան, անմարդկային եւ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի մյուս ձեւերը, որոնք չեն դասվում 1-ին հոդվածում որպես խոշտանգում սահմանվածների շարքը, երբ այդպիսի գործողությունները կատարվում են պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող մեկ այլ անձի**

Կողմից, կամ նրանց հրահրմամբ, կամ նրանց գիտությամբ կամ լուռ համաձայնությամբ:

ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայով սահմանված է նաև մասնակից պետությունների կողմից Կոնվենցիայի պահանջների իրականացումը վերահսկող «Խոշտանգումների դեմ կոմիտե» (ԽԴԿ) (CAT) կոչվող մարմինը, որը կազմված է մասնակից պետությունների կողմից առաջադրված, մարդու իրավունքների բնագավառում գործող թվով 10 փորձագետներից: «Խոշտանգումների դեմ կոմիտե»-ի կողմից սահմանված է ընթացակարգ, համաձայն որի կոմիտեն մշակում է անդամ պետությունների կառավարություններին է ուղարկում հարցեր, որոնց պատասխանները տեղ են գտնելու ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի իրագործման վերաբերյալ պարբերական զեկույցներում: Հայաստանի Հանրապետության համար հարցերի ցանկը⁹ վերջին անգամ հրապարակվել է 2019թ.-ի դեկտեմբերի 9-ին: Ցանկում ներառված են մի շարք հարցադրումներ, որոնցից են

- Արդյո՞ք ձեռնարկվել են քայլեր խոշտանգման համար մեղավոր ճանաչված անձանց ներմամբ, համաներմամբ կամ ցանկացած այլ նմանատիպ միջոցներով քրեական պատասխանատվությունից ազատվելու արգելք սահմանելու ուղղությամբ, ինչպես օրենքով, այնպես էլ՝ գործնականում:
- Արդյո՞ք «ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքում» կատարվել են փոփոխություններ՝ ներառյալ բոլոր քրեական հարցաքննությունների պարտադիր աուդիո և տեսա ձայնագրումը, և արդյո՞ք ոստիկանության բաժանմունքներում առկա բոլոր հարցաքննող սենյակները հագեցված են աուդիո և տեսա ձայնագրման սարքերով:

Խոշտանգումները եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու համար ազատագրկման վայրեր կանոնավոր այցելությունների համար անկախ միջազգային եւ ազգային մարմինների համակարգի ստեղծման նպատակով, 2002 թվականին ՄԱԿ-ի կողմից ընդունվեց «Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը»¹⁰ (OPCAT): Արձանագրությունը ուժի մեջ է մտել 2006 թվականի հոկտեմբերի 14-ին եւ կոչ է անում մասնակից պետություններին ազգային մակարդակով ստեղծել խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելմամբ զբաղվող մարմիններ: Բացի այդ, արձանագրությունը կոչ է անում մասնակից պետություններին՝ խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման նպատակով թույլատրել այցելություններն իր իրավագորության եւ հսկողության ներքո գտնվող ցանկացած վայր, որտեղ անձինք զրկված են կամ կարող են զրկվել իրենց ազատությունից՝ պետական մարմնի կողմից տրված հրամանով կամ նրա հրահրումով, նաեւ նրա համաձայնությամբ կամ թույլտվությամբ:

9. «Խոշտանգումների դեմ կոմիտե», հինգերորդ պարբերական զեկույցին ընդառաջ հարցերի ցանկ. https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CAT%2F2019%2FQPR%2F5&Lang=en
10. «Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրություն». <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31421>

1999 թվականին Միավորված ազգերի կազմակերպության կողմից որպես պաշտոնական փաստաթուղթ ճանաչվեց **«Ստամբուլյան արձանագրություններ»**՝ վերնագիրը կրող փաստաթուղթը: «Ստամբուլյան արձանագրություններ»-ով սահմանվում են խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասով արդյունավետ քննության իրականացման եւ փաստաթղթավորման համընդհանուր սկզբունքները: Այդ սկզբունքներով պետությունների համար ուրվագծվում են խոշտանգումների վերաբերյալ արդյունավետ փաստաթղթավորումն ապահովելու նվազագույն չափանիշները: Փաստաթուղթն, ըստ էության, հանդիսանում է միջազգային ուղեցույց՝ խոշտանգման ու վատ վերաբերմունքի մասին հայտնող անձանց մասով գնահատական տալու, խոշտանգման ենթադրյալ դեպքերը հետազոտելու, ինչպես նաեւ համապատասխան եզրահանգումները դատական իշխանությանը կամ գործի քննությունն իրականացնող որեւէ այլ մարմնի ներկայացնելու համար:


Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքի հստակ իրավական մեխանիզմներ են նախատեսված նաեւ **Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայով** (ՄԻԵԿ): Խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը սահմանվում է այս Կոնվենցիայի 3-րդ հոդվածով: Հայաստանը վավերացրել է կոնվենցիան 2002թ. ապրիլի 26-ին: **Մարդու իրավունքների եվրոպական դատարանը** (ՄԻԵԴ), որը գործադրում է եվրոպական կոնվենցիան, իր նախադեպային որոշումներով ապահովում է Կոնվենցիայով ամրագրված իրավունքների նկատմամբ հարգանքը՝ Կոնվենցիայի անդամ պետությունների կողմից:

Դատարանի նախադեպային որոշումները պարտադիր իրավական ուժ ունեն Կոնվենցիան վավերացրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների¹¹ համար, եւ նրանք պարտավոր են ենթարկվել դրանց: Վճռի կատարման վերահսկման համար պատասխանատու է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն: Վերջինս որոշում է, թե արդյո՞ք պետությունները, որոնց իրավասության ներքո հայտնաբերվել են Կոնվենցիայի խախտումներ, ձեռնարկել են բավարար մեղմացնող միջոցներ՝ կատարելու Դատարանի կայացրած հատուկ կամ ընդհանուր վճիռները: Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հետ միասին նախարարների կոմիտեն պաշտպանում է խորհրդի հիմնարար արժեքները, վերահսկում անդամ պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումը:

«Խոշտանգում», «անմարդկային» եւ «նվաստացնող» հասկացությունների բովանդակությունը բացահայտված է Եվրոպական դատարանի մի շարք վճիռներում, որտեղ ձեւերի տարբերակումը հիմնականում կախված է դիտավորությամբ պատճառված տառապանքի ծանրության տարբեր աստիճաններից եւ բնույթից: Ըստ ՄԻԵԴ-ի մեկնաբանության՝ խոշտանգման դեպքում անհրաժեշտ է ապացուցել վատ վերաբերմունքի, կոնկրետ նպատակի առկայությունը, իսկ վերաբերմունքի այլ ձեւերի դեպքում նման պահանջ չկա:

11. Հայաստանի Հանրապետությունը Եվրոպայի խորհրդի անդամ է հանդիսանում 2001 թվականից:

Օրինակ՝ «Գրիշա Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի» (գանգատ թիվ 40094/05) գործով¹² ՄԻԵԴ-ը ճանաչել է դիմողի ՄԻԵԿ 3-րդ հոդվածով նախատեսված իրավունքի (ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի) խախտումը:



Գրիշա Վիրաբյանը 2004 թվականին ակտիվ մասնակցել է զանգվածային բողոքի ակցիաներին: Նույն թվականին դիմումատուին «հրավիրել» էին ոստիկանության Արարատի բաժին, որտեղ, ըստ Վիրաբյանի, մի քանի ոստիկաններ խոշտանգել են իրեն:

ՄԻԵԴ-ը գտել է, որ դիմումատուն ենթարկվել է առանձնապես դաժան վատ վերաբերմունքի, որը նրան պատճառել է սուր ֆիզիկական և հոգեկան ցավ ու տառապանք: Հաշվի առնելով վատ վերաբերմունքի բնույթը, աստիճանը և նպատակը՝ Դատարանը գտել է, որ այն կարելի է բնորոշել որպես խոշտանգում:

Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի տարբերակման խնդիրն ավելի բարդ է: Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը և դատարանը փորձել են տալ դրանց սահմանումներն ու առանձնացնել դրանց տարբերակիչ հատկանիշները¹³: Հանձնաժողովի սահմանման համաձայն՝ ««Անմարդկային վերաբերմունք» հասկացությունը ներառում է այնպիսի վերաբերմունք, որով առանց հատուկ նպատակի, սակայն մտածված կերպով պատճառվում է ուժեղ ֆիզիկական կամ հոգեկան տառապանք: Վերաբերմունքը կամ պատիժը կարող է նվաստացնող համարվել, եթե այլոց առջեւ ստորացնում է անձին կամ նրան ստիպում է գործել իր կամքին կամ գիտակցությանը հակառակ»:

Ըստ դատարանի սահմանման՝ ««Նվաստացնող» կարող է համարվել այն վերաբերմունքը, որը զոհերի մեջ առաջացնում է վախի, բարկության և ստորադասության զգացում, ինչը կարող է ստորացնել նրանց և կոտորել նրանց ֆիզիկական կամ բարոյական դիմադրողականությունը»¹⁴:


ՄԻԵԴ-ի կողմից վերջին տարիներին կայացվել են մի շարք վճիռներ ընդդեմ Հայաստանի Հանրապետության, որտեղ Դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ դիմումատուների կողմից իրենց նկատմամբ վատ վերաբերմունքի մասին հայտարարությունների կապակցությամբ իրականացված քննությունը արդյունավետ չի եղել:

12. «Գրիշա Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի» (գանգատ թիվ 40094/05) գործ http://justice.am/storage/files/legal_acts/legal_acts_7182269154741_VIRABYAN-last.pdf

13. Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի՝ Հունական գործով 1969 թ. նոյեմբերի 5-ի գեկույց

14. Քենանն ընդդեմ Միացյալ Թագավորության և Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության գործերով վճիռներ

«Արայիկ Զալյանը, Ռազմիկ Սարգսյանը եւ Մուսա Սերոբյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության» գործով¹⁵ (Գանգատներ թիվ 36894/04 եւ 3521/07) 2016թ. մարտի 17-ին կայացրած վճռով ՄԻԵԴ-ը ճանաչել է ՄԻԵԿ 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտում՝ այն առնչությամբ, որ ներպետական իրավասու մարմինները չեն իրականացրել արդյունավետ քննություն, այդ թվում՝ ռազմական ոստիկանության քննչական մեկուսարանում պահվելու ժամանակ վատ վերաբերմունքի ենթարկվելու դիմումատուների հայտարարությունների կապակցությամբ:




ՄԻԵԴ-ի գնահատմամբ՝ դիմողների կողմից իրենց նկատմամբ վատ վերաբերմունքի մասին հայտարարությունների կապակցությամբ իրականացված քննությունը չի եղել արդյունավետ, քանի որ՝

1. դատախազության մարմինները ոչ միայն չեն իրականացրել անհապաղ քննություն, այլ, ըստ էության, չեն իրականացրել որեւէ քննություն՝ չեն գործադրել ջանքեր ապացույցներ հավաքելու նպատակով, չեն նշանակվել բժշկական զննություններ, հարցաքննվել է միայն դիմողներից մեկը, սակայն նրան չեն առաջադրվել մանրամասն հարցեր եւ այլն:
2. Վճռաբեկ դատարանի 22.12.2006թ. որոշումից հետո հարուցված քրեական գործի քննության շրջանակում ենթադրյալ վատ վերաբերմունք դրսևւորածները չեն ներգրավվել որպես կասկածյալ, այլ շարունակել են հանդես գալ որպես վկաներ, ինչն էլ հիմք է տվել կասկածելու, որ նման քննության նպատակը դիմողների հայտարարությունների առնչությամբ արժանահավատ եւ ամբողջական քննություն իրականացնելը եւ մեղավորներին բացահայտելն ու պատժելն է եղել: Ենթադրյալ կատարողների ցուցմունքների արժանահավատությունը կասկած է առաջացրել, քանի որ դրանք նույնաբովանդակ են եղել:
3. Բացի այդ, փաստը, որ քննությունն իրականացվել է զինվորական դատախազության քննիչների, այսինքն՝ այն մարմնի քննիչների կողմից, որոնք ենթադրաբար առնչվել են դիմողների նկատմամբ վատ վերաբերմունքին, չի բավարարել քննության անկախության եւ անկողմնակալության պահանջը:

15. «Արայիկ Զալյանը, Ռազմիկ Սարգսյանը եւ Մուսա Սերոբյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության» գործ. http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_6617531247521_CASE_OF_ZALYAN_AND_OTHERS_v_ARMENIA_1_.pdf

«Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի» գործով¹⁶ (գանգատ թիվ 52316/09) կայացրած վճռում ՄԻԵԴ-ը նույնպես ճանաչել է ՄԻԵԿ 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտում՝ այն առնչությամբ, որ ազգային իշխանությունները արդյունավետ քննություն չեն իրականացրել ռազմական ոստիկանությունում գտնվելու ընթացքում վատ վերաբերմունքի ենթարկվելու դիմողի բողոքների կապակցությամբ:



ՄԻԵԴ-ը, մասնավորապես, եզրակացրել է, որ.

- 1. իրականացված քննությունը չի բավարարել անկախության սկզբունքի պահանջը, քանի որ, թեպետ կազմակերպական ենթակայության իմաստով ռազմական ոստիկանությունն առանձին կառույց է և ենթակա չէ բողոքը քննած զինվորական դատախազությանը, սակայն հաշվի առնելով, որ Դիմողի վերաբերյալ քրեական գործը քննած նույն քննիչն է քննել նաև ՌՈ աշխատակիցների (որոնք ներգրավված են եղել դիմողի քրեական գործի մեջ) կողմից վատ վերաբերմունքի ենթարկվելու վերաբերյալ դիմողի բողոքը, եւ բողոքի քննության արդյունքը պարտադիր հետեւանքներ կունենար դիմողի քրեական գործով ապացույցների ընդունելիության վրա, ուստի քննության անկախության պահանջը չի բավարարվել:**
- 2. Առանց որեւէ հիմնավորման նախապատվությունը տրվել է ՌՈ աշխատակիցների ցուցմունքներին, որոնց վրա էլ քննիչը հենվել է բողոքը մերժելիս:**
- 3. Բացի ՌՈ երեք աշխատակիցներին հարցաքննելը, որոնց հարցաքննել է բողոքից երեք ամիս հետո միայն, որեւէ այլ գործողություն քննիչը չի իրականացրել. չի իրականացրել բժշկական զննություն, չի կատարել առերեսում կամ որեւէ այլ անհրաժեշտ գործողություն:**

ՄԻԵԴ-ը հստակ պահանջներ է դնում խնդրո առարկա պետության (այս պարագայում Հայաստանի Հանրապետության) առջեւ՝ պարտավորեցնելով խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի կանխարգելման նպատակով հստակ քայլեր իրականացնել:

Այս առումով ուշագրավ է զինծառայող Սուրեն Մուրադյանի մահվան հետ կապված «Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» գործով¹⁷ (Գանգատ թիվ 11275/07) ՄԻԵԴ-ի կողմից կայացված վճիռը (2016 թվականի նոյեմբերի

16. «Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի» գործ.


http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_7244015343521_CASE_OF_MATEVOSYAN_v._ARMENIA_ARM.pdf

17. «Մուրադյանն ընդդեմ Հայաստանի»

http://www.justice.am/storage/files/legal_acts/legal_acts_8947388325861_CASE_OF_MURADYAN_v._ARMENIA_ARM.pdf

24): Դիմումատուն՝ Սուրեն Մուրադյանի հայրը, պնդել է, որ իր որդին՝ 2001 թվականի հունիսի 26-ին զորակոչված Սուրեն Մուրադյանը, մահացել է վերադաս երեք սպաների վատ վերաբերմունքի եւ հետագայում պատշաճ բժշկական օգնություն չստանալու հետեանքով, եւ որ իշխանություններն այդ հանգամանքների արդյունավետ քննություն չեն իրականացրել:

ՄԻԵԴ-ը պարտավորեցրել է պետությանն արժանահավատ բացատրություն ներկայացնել արգելանքի տակ պահելու ընթացքում առաջացած վնասվածքների կամ վրա հասած մահվան վերաբերյալ: Ի դեպ, «արգելանք» եզրույթն այս պարագայում նույնացվում է զինվորական ծառայություն կրելու փաստի հետ: ՄԻԵԴ-ի ձեակերպմամբ՝



«... ինչպես արգելանքի տակ գտնվող անձանց դեպքում, զորակոչիկները նույնպես գտնվում են պետության ձեռքերում, եւ բացառապես իշխանություններն են ամբողջությամբ կամ մեծ մասամբ տեղյակ բանակում տեղի ունեցող դեպքերից: Այդ պատճառով պետությունը նաեւ պարտավոր է ներկայացնել բավարար եւ համոզիչ բացատրություն բանակում առաջացած վնասվածքների կամ վրա հասած մահվան վերաբերյալ»:

Իր վճռում ՄԻԵԴ-ը մասնավորապես նշում է, որ հակառակ դեպքում անխուսափելիորեն ի հայտ է գալիս Կոնվենցիայի 2-րդ (Կյանքի իրավունք) եւ 3-րդ (Խոշտանգումների արգելում) հոդվածների ներքո պատասխանատվության հարց:

ՄԻԵԴ-ը նաեւ նշում է, որ վատ վերաբերմունքի վերաբերյալ վարկածը պատշաճորեն չի ստուգվել նույնիսկ այն բանից հետո, երբ քրեական վարույթն իրականացնող մարմինները ձեռք են բերել ապացույց, որի համաձայն գործով ներգրավված երեք սպաներից առնվազն երկուսն առնչություն ունեն զինծառայող Մուրադյանի նկատմամբ ենթադրաբար իրականացված բռնության դեպքին: Բացի այդ, ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ վերաքննիչ քրեական դատարանը, որը նորից քննել է գործը զորամասի բժիշկների մասով, որոշել է նրանց դատապարտել ազատազրկման, անուհետև՝ որոշում է կայացրել ընդունված համաներման ակտի կիրառմամբ նրանց ազատել պատժից:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության կողմից ներկայացված «Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» գործով վճռի կատարողականին ի պատասխան կայացրած որոշման մեջ, ի թիվս այլ հանձնարարականների, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն՝

ա) կոչ է արել իշխանություններին առավելագույն ջանքեր գործադրել խուսափելու համար գործի հետ կապված ապացույցների կամ փաստական տվյալների կորստից՝ հաշվի առնելով գործում քննվող իրադարձություններից անցած զգալի ժամանակը,

բ) խրախուսել է իշխանություններին հաշվի առնել տեղական եւ միջազգային իրավապաշտպան կառույցների կողմից ոլորտի վերաբերյալ բարձրաձայնված մտահոգություններն ու առաջարկությունները,

գ) հորդորել է իշխանություններին ներկայացնել վիճակագրական տվյալներ եւ մանրամասն տեղեկատվություն խոշտանգումների արգելքի օրենսդրության հիման վրա հետաքննությունների եւ դատական վարույթների վերաբերյալ,

դ) խրախուսել է իշխանություններին կյանքի կոչել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված խոշտանգումների արգելքի հետ կապված նոր երաշխիքները,

ե) գոհունակություն է հայտնել իշխանությունների՝ խոշտանգման համար մեղավոր ճանաչված անձանց նկատմամբ համաներում կիրառելու արգելքի սահմանման ուղղությամբ տարվող աշխատանքները եւ կոչ արել հնարավորինս արագ ընդունել այդ նախագիծը:

Վերոնշյալն ամփոփելով՝ պետք է արձանագրել, որ խոշտանգումների արգելքը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունք է, որն ամրագրված է մի շարք իրավական փաստաթղթերում: Մարդու իրավունքների պաշտպանության տասնամյակների փորձի վրա հիմնված եւ պարբերաբար զարգացող միջազգային այս նորմերը նախանշում են խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերի կանխմանն ու բացառմանն ուղղված այն համընդհանուր չափանիշները, որոնք պետք է ամրագրված լինեն անդամ պետությունների օրենսդրություններում՝ խոշտանգման արգելքի իրավունքը երաշխավորելու նպատակով: Բացի վերոնշյալը, այս նորմերը միտված են զարգացնելու նաեւ ներպետական մեխանիզմներ խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերի պատշաճ փաստագրման եւ դրանց աղիթով արդյունավետ, օբյեկտիվ եւ բազմակողմանի քննության իրականացման նպատակով:

Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի զեկույցները եւ առաջարկները

1987թ. նոյեմբերի 26-ին ընդունված Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիան նպաստեց, որ այն ստորագրած եվրոպայի խորհրդի անդամ պետությունները համաձայնության գան եւ ստեղծեն խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխման նպատակով եվրոպական կոմիտե (ԽԿԿ): Կոմիտեն այցելությունների միջոցով ուսումնասիրում է ազատագրված անձանց նկատմամբ վերաբերմունքը՝ անհրաժեշտության դեպքում խոշտանգումներից եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից նրանց պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով:

ԽԿԿ պատվիրակությունները կատարում են պարբերական այցելություններ (սովորաբար՝ չորս տարին մեկ), ինչպես նաեւ անհրաժեշտության դեպքում լրացուցիչ հատուկ (“ad hoc”) այցելություններ: Յուրաքանչյուր այցելությունից հետո ԽԿԿ-ն մանրամասն զեկույց է ներկայացնում տվյալ պետությանը: Պետությունները յուրաքանչյուր զեկույցից հետո պարտավոր են պատասխանել դրանում բարձրացված հարցերին:

ԽԿԿ պատվիրակության առաջին այցը Հայաստան տեղի է ունեցել 2002 թվականի հոկտեմբերի 6-17-ը: Այցելության վերաբերյալ կազմված զեկույցում¹⁸ պաշտպանության նախարարության իրավասության տակ գտնվող հաստատությունների մասին առաջարկությունները վերաբերվում էին այդ ժամանակ դեռ գործող պաշտպանության նախարարության

18. ԽԿԿ պատվիրակության 2002 թվականի հոկտեմբերի 6-17-ը Հայաստան այցելության վերաբերյալ զեկույց (անգլերեն). <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680667a9e>

կալանավայրերին, մասնավորապես, կալանավայրերի պայմաններին եւ կալանավորների նկատմամբ վատ վերաբերմունքի կանխման երաշխիքներին: Սույն զեկույցի թեմայի առնչությամբ, 2002թ. հոկտեմբերի 6-17-ի ԽԿԿ պատվիրակության այցելության արդյունքների վերաբերյալ 2004թ. հուլիսի 28-ի ԽԿԿ վերջնական զեկույցում կոմիտեն առաջարկել է, որպեսզի իրավասու մարմինները ռազմական ոստիկանության մեկուսարաններում ձերբակալվածների համար պատասխանատու անձնակազմին հստակ հաղորդագրություն հղեն վատ վերաբերմունքի բոլոր եղանակների, ներառյալ՝ նվաստացման եւ բանավոր վիրավորանքի անթույլատրելիության մասին:

2006 թվականի ապրիլի 2-12-ը տեղի ունեցած այցելության վերաբերյալ զեկույցը¹⁹, չնայած որ չի ներառում «Ռազմական հիմնարկներ» բաժին, սակայն «Ոստիկանական հաստատություններ» բաժնում ԽԿԿ պատվիրակությունը արձանագրել է, որ այցի ընթացքում պատվիրակությունը ստացել է վատ վերաբերմունքի մասին բազմաթիվ հաղորդումներ այն անձանցից, ովքեր վերջերս բերման են ենթարկվել կամ ձերբակալվել ռազմական ոստիկանության կողմից:

2010 թ.-ի մայիսի 10-21-ը ԽԿԿ պատվիրակության Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույցի²⁰ «Ռազմական հիմնարկները» բաժնում Հայաստանի իշխանություններին, մասնավորապես, առաջարկում է, որպեսզի կալանավորված անձինք հնարավորինս արագ տեղափոխվեն քրեակատարողական հիմնարկներ, իսկ կալանավորված զինձառայողներին ազատագրկման վայր տեղափոխելուց հետո նրանց հարցաքննությունը ռազմական ոստիկանության աշխատակիցների կողմից իրականացվի քրեակատարողական հիմնարկներում: Նույն զեկույցում ԽԿԿ-ն նշում է, որ թեեւ հայաստանյան քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին կոնկրետ մոնիտորինգային ծրագրի շրջանակներում այդ վայրեր մուտք գործելու հնարավորություն տրվել է, այնուամենայնիվ, ռազմական ոստիկանությանը նախապես ծանուցում է ուղարկվել նրանց այցերի վերաբերյալ: Միեւնույն ժամանակ, զեկույցի հեղինակները անհրաժեշտ են համարել շեշտել, որ լիարժեք արդյունավետության համար մոնիտորինգի խմբերի այցերը պետք է կրեն հաճախակի բնույթ եւ իրականացվեն առանց նախազգուշացումների: 2010 թ.-ի այցի արդյունքների վերաբերյալ 2011թ.-ի օգոստոսի 17-ին հրապարակված զեկույցի 44-րդ կետում խնդրո առարկա հարցի վերաբերյալ նշվել է, որ պատվիրակությունը ՌՌ հաստատություններում պահվող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի մասին վկայող հաղորդումներ չի ստացել: Պատվիրակությունը, սակայն, ՀՀ իշխանություններից ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու ցանկություն է հայտնել՝

- ռազմական ոստիկանության աշխատակիցների կողմից ցուցաբերված վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքների քանակի,
- բողոքների առիթով հարուցված քրեական եւ կարգապահական վարույթների քանակի,
- ինչպես նաեւ առհասարակ ռազմական ոստիկանության աշխատակիցների նկատմամբ հարուցված քրեական գործերի եւ կարգապահական վարույթների կիրառման վերաբերյալ:

19. ԽԿԿ պատվիրակության 2006 թվականի ապրիլի 2-12-ը Հայաստան այցելության վերաբերյալ զեկույց (անգլերեն) <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168066d074>

20. 2010 թ.-ի մայիսի 10-ից մինչեւ 21-ը ԽԿԿ պատվիրակության Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց https://www.gov.am/u_files/file/kron/CPT_arm_final.pdf

2010թ. մայիսին ՀՀ կատարած պարբերական այցելության արդյունքում կազմված զեկույցի վերաբերյալ պատասխան զեկույցում²¹ ՀՀ կառավարությունը փաստացի չի արձագանքել պատվիրակության կողմից բարձրացված այս հարցադրումներին:

2015թ.-ի հոկտեմբերի 5-15-ը ԽԿԿ պատվիրակության Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույցի²² «Զինվորական կալանավայրեր» բաժնում սույն ուսումնասիրության թեմայի առնչությամբ պատվիրակությունը ՀՀ իշխանությունների ուշադրությունը հրավիրել է երկու հիմնական խնդիրների վրա՝

- 1) Երեւանում գտնվող ՌՈ կայազորային մեկուսարանում զինվորականի վեց ամիս շարունակ գտնվելու փաստի,
- 2) մեկուսարանում գոյություն ունեցող պատժախցի առկայության վրա:

Առաջին հարցով պատվիրակությունն իր անհանգստությունն է հայտնել մեկուսարանը գործնականում որպես կալանավայր օգտագործելու փաստի վերաբերյալ, քանի որ պաշտպանության նախարարության հավաստմամբ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության կարգապահական մեկուսարանում ՀՀ քրեական օրենսդրության շրջանակներում պահվում են միայն այն զինծառայողներն, ովքեր քրեական գործով ձերբակալվել են (մինչեւ 72 ժամ), ում նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց է ընտրված եւ կալանքի դատապարտված զինծառայողները (15 օրից մինչեւ 3 ամիս) ժամկետով:

Երկրորդ խնդրի կապակցությամբ պատվիրակությունը ցանկացել է մանրամասն տեղեկություններ ստանալ այն ընթացակարգային երաշխիքների մասին, որոնք կարող են կիրառվել ձերբակալվածների կամ կալանավորվածների պատժախցում հայտնվելու դեպքում (իրավաբանական օգնություն ստանալը, որոշման պատճենը տրամադրելը, բողոքարկման իրավունքի մասին հայտնելը եւ այլն):

Հարկ է նշել նաեւ, որ ԽԿԿ-ի պատվիրակությունը Հայաստան այցելել է նաեւ 2019 թվականին, սակայն սույն զեկույցի հրապարակման օրվա դրությամբ այցի վերաբերյալ զեկույցը դեռեւս մշակման փուլում էր:

21. ԽԿԿ պատվիրակության կողմից 2010թ. մայիս ամսին Հայաստանի Հանրապետություն կատարած պարբերական այցելության արդյունքում կազմված զեկույցի վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխանները <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680698745>

22. ԽԿԿ պատվիրակության 2002 թվականի հոկտեմբերի 6-17-ը Հայաստան այցելության վերաբերյալ զեկույցը (անգլերեն) <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168066f46f>

Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցները եւ հաղորդումները

Հայաստանի Հանրապետությունում Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը գործում է 2003 թվականի հոկտեմբերի 21-ից, երբ ընդունվեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը²³:

Սահմանադրության 2015 թվականի փոփոխություններից հետո «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» նոր օրենք ընդունելու անհրաժեշտություն առաջացավ: 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունվեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը²⁴, որի 2-հոդվածը սահմանում է, որ **Պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետեւում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաեւ կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների եւ ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների եւ ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:** Սահմանադրական օրենքի վերոհիշյալ հոդվածի երկրորդ մասով պաշտպանին է վերապահված «**Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ**» ՄԱԿ-ի 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունված կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակը:

Սահմանադրական օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանը յուրաքանչյուր տարի Ազգային ժողով է ներկայացնում նախորդ տարվա իր գործունեության, մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, ինչպես նաեւ հրապարակում է իր՝ որպես Կանխարգելման ազգային մեխանիզմի նախորդ տարվա գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը: Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանը կարող է հանդես գալ նաեւ արտահերթ հրապարակային զեկույցներով կամ հաղորդումներով:

Նա նաեւ տարեկան զեկույցներ է հրապարակում 2004 թվականից, իսկ 2015 թ.-ից հրապարակում է նաեւ տարեկան հաղորդումներ²⁵:

23. 2003 թվականի հոկտեմբերի 21-ին ընդունված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենք <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=64341>

24. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք <http://www.irtek.am/views/act.aspx?aid=88102>

25. Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներ եւ հաղորդումներ <https://www.ombuds.am/am/site/SpecialReports>

Այսպես.

- 2012 թվականի իր տարեկան զեկույցում²⁶ Մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը նշում է, որ ռազմական ոստիկանության աշխատակիցներն իրենց գործառույթներն իրականացնելիս թույլ են տվել պաշտոնեական դիրքի չարաշահումներ: Ավելին, պաշտպանության նախարարության ՌՈ աշխատակիցների կողմից իրականացված հետաքննչական գործողությունների վերաբերյալ ստացվել են բողոքներ, մասնավորապես, վերջիններիս կողմից տեղեկություններ ստանալու նպատակով անձանց հանդեպ հոգեկան եւ ֆիզիկական ճնշումների գործադրման մասին: Ըստ այդմ՝ պաշտպանն առաջարկել է հետամուտ լինել ՌՈ կողմից տեղի ունեցող չարաշահումների կանխարգելմանը եւ իրավախախտների պատասխանատվության ենթարկելուն:
- 2013 թվականի տարեկան զեկույցում²⁷ նշվում է, որ Երեւանի եւ մարզային ռազմական ոստիկանություն, ՌՈ մեկուսարաններ եւ կարգապահական գումարտակ պաշտպանի այցի արդյունքում պարզվել է, որ ՊՆ ռազմական ոստիկանության կողմից մի շարք դեպքերում չեն պահպանվում զինծառայողներին բերման ենթարկելու եւ նրանց պահելու համար օրենսդրորեն սահմանված ժամկետները, բերման ենթարկված անձանց հաշվառման մատյաններում եղել են ժամային էական խախտումներ: Օրինակ, թեւ օրենքով անձի պահման համար նախատեսված է առավելագույնը 3 ժամ, բերման ենթարկված անձին պահել են մինչեւ 16 ժամ եւ ավելի: Պաշտպան Կ. Անդրեասյանը առաջարկել է վերահսկողություն սահմանել մեկուսարաններում առկա մատյանների՝ պատշաճ կարգով լրացման եւ պահպանման ուղղությամբ: Նույն խնդիրը արտացոլված է նաեւ 2013 թվականին հրապարակված միջանկյալ զեկույցում:
- 2014 թ.-ի Կ. Անդրեասյանի տարեկան զեկույցում²⁸ նշվում է, որ գրանցվել են ՊՆ ռազմական ոստիկանության եւ քննչական ծառայության որոշ պաշտոնատար անձանց կողմից զինծառայողների խոշտանգման եւ այլ դաժան վերաբերմունքի մասին առանձին գանգատներ: 2014 թվականին, մասնավորապես, ՀՀ զինված ուժերից զորացրված պարտադիր ժամկետային երկու զինծառայող ՀՀ ՄԻ պաշտպան Կարեն Անդրեասյանին տեղեկություններ են հայտնել իրենց նկատմամբ ռազմական ոստիկանության աշխատակիցների կողմից կատարված բռնությունների մասին:

Նախկին զինծառայողներից մեկը պատմել է, որ իրեն եւ երկու այլ ծառայակցի ռազմական ոստիկանության աշխատակիցները ծեծել են, պահանջել հայտնել զորամասում մեկ այլ զինծառայողին ծեծի ենթարկողի անունը՝ սպառնալով օրերով պահել անազատության մեջ:

Ըստ մյուս նախկին զինծառայողի՝ իրենց զորամասում

26. Մարդու իրավունքների պաշտպանի 2012 թվականի տարեկան զեկույց <https://www.ombuds.am/images/files/8457ae1e59323e9a6af27d41b365930d.pdf>
27. Մարդու իրավունքների պաշտպանի 2013 թվականի տարեկան զեկույց <https://www.ombuds.am/images/files/afe1e423a8f465a4fba32ccc27ef913a.pdf>
28. Մարդու իրավունքների պաշտպանի 2014 թվականի տարեկան զեկույց <https://www.ombuds.am/images/files/206d2af54f5149a560ed7a616830d107.pdf>

կատարված մի հանցագործության քննության շրջանակներում ռազմական ոստիկանության ծառայողը հարցաքննելու ամբողջ ընթացքում ձեռքի ցուցամատով եւ միջնամատով անդադար թեթեւ հարվածել է իր կրծքավանդակին: Նախկին զինծառայողը նշել է, որ այդ պահին ուշադրություն չի դարձրել ոստիկանության աշխատակցի կողմից իր կրծքավանդակին հասցված հարվածներին, քանի որ դրանք որեւէ ցավ չեն պատճառել: Երկու օր անց, սակայն, կրծքավանդակն սկսել է սաստիկ ցավել՝ այնպես, որ դժվարությամբ է կարողացել շնչել:

Նույն զեկույցում նկարագրված մեկ այլ դեպքով, զինծառայողի սպանության վերաբերյալ քրեական գործով որպես վկա ներգրավված զինծառայողները հայտնել են ՊՆ քննչական ծառայության քննիչի կողմից իրենց նկատմամբ բռնություն գործադրելու մասին՝ կոնկրետ մատնանշելով բռնություն գործադրած քննիչին եւ նկարագրելով նրա գործողությունները: Նույն քննչական ծառայության կողմից նախապատրաստված նյութերով, սակայն, որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Զեկույցում նշվում է, որ ըստ նախարարության հայտնած տեղեկատվության, 2014 թվականին ռազմական ոստիկանության աշխատակիցների կողմից իրենց գործառույթներն իրականացնելիս պաշտոնեական դիրքի չարաշահումների կամ այլ անօրինական գործողությունների վերաբերյալ որեւէ բողոք կամ ահազանգ չի եղել, զինծառայողների նկատմամբ խոշտանգումների եւ այլ դժժանակ վերաբերմունքի դեպքեր ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանությունում չեն արձանագրվել:

Ըստ այդմ, Անդրեասյանն առաջարկել էր **խստացնել հսկողությունը հատկապես հանցագործության դեպքերի քննության սկզբնական փուլում ռազմական ոստիկանության ծառայողների գործունեության նկատմամբ, խրախուսել զինված ուժերում խոշտանգումների եւ այլ դժժանակ վերաբերմունքի դեպքերի մասին հաղորդումներ ներկայացնելու պրակտիկան՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելով այդ զինծառայողներին հնարավոր վրեժխնդրությունից կամ խտրական վերաբերմունքից պաշտպանելու ուղղությամբ, ներդնել ռազմական ոստիկանությունում զինծառայողների հարցաքննությունը եւ այլ քննչական ու դատավարական գործողությունները տեսաձայնագրելու պրակտիկան, հետետողական կերպով իրականացնել խոշտանգումների եւ այլ դժժանակ վերաբերմունքի արգելքի վերաբերյալ դասընթացների կազմակերպում:**

- Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի 2018 թվականի տարեկան զեկույցում²⁹ նշվում է, որ ՌՈ կարգապահական մեկուսարաններ այցի ընթացքում պարզվել է, որ մեկուսարան մուտք գործած անձինք բժշկական զննության են ենթարկվում ռազմական ոստիկանության անձնակազմի ներկայությամբ: Մինչդեռ, ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետության 4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ ամփոփիչ դիտարկումների 10-րդ կետի «ե» ենթակետի համաձայն՝ պետությունը միջազգային

29. Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան զեկույց <https://www.ombuds.am/images/files/159e14f47f7029294110998e75a5433f.pdf>

չափանիշներին համապատասխան պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկի ազատությունից զրկված բոլոր անձանց, ազատությունից զրկելու սկզբնական պահից, խոշտանգումների դեպքերի կանխարգելմանն ուղղված բոլոր հիմնարար իրավական երաշխիքներից գործնականում օգտվելու հնարավորությունն ապահովելու ուղղությամբ: Նման իրավունքներից է անկախ բժշկի կողմից բժշկական զննության ենթարկվելու իրավունքը, որը պետք է կատարվի ոստիկանության անձնակազմի լսելիության սահմաններից եւ, եթե համապատասխան բժիշկը հակառակը չպահանջի, տեսադաշտից դուրս:

- Նույն թվականի հաղորդման մեջ³⁰ Թաթյանը նշում է, որ ռազմական ոստիկանությունում ծեծելու, ապօրինաբար այնտեղ պահելու ենթադրյալ դեպքերի առթիվ Մարդու իրավունքների պաշտպանին է դիմել փաստաբանը եւ տեղեկացրել, որ վերը նշվածի վերաբերյալ հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն եւ ՀՀ հատուկ քննչական ծառայություն: Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ դատախազությունից տրամադրվել է տեղեկություն այն մասին, որ փաստաբանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին եւ ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին ներկայացրած «Հանցագործության մասին հաղորդում» վերտառությամբ դիմումն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 4-րդ կայազորային քննչական բաժին եւ հանձնարարվել քննության առարկա դարձնել դիմումում ներկայացված փաստերն ու հանգամանքները:

Բացի այդ, պաշտպանի աշխատակազմը ստացել է մեկ այլ բողոք պարտադիր ժամկետային զինծառայողին ծեծելու եւ ցուցմունք տալուն հարկադրելու վերաբերյալ: Մարդու իրավունքների պաշտպանն անմիջապես գրություն է հասցեագրել ՀՀ գլխավոր դատախազություն՝ առաջարկելով քրեական վարույթի շրջանակներում ստուգել նկարագրված հանգամանքները, իսկ այդպիսի վարույթ նախաձեռնած լինելու դեպքում՝ տեղեկություններ տրամադրել դրա ընթացքի վերաբերյալ: Պաշտպանի աշխատակազմում ի գիտություն է ընդունվել դատախազության տրամադրած տեղեկությունն այն մասին, որ քրեական գործի օբյեկտիվ, լրիվ եւ բազմակողմանի քննության արդյունքում սպայի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է:

Պաշտպանը հասցեագրված բողոքների առկայությունը համարել է մտահոգիչ եւ անհրաժեշտ համարել՝

1. կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել զինված ուժերում զինծառայողներին խոշտանգումներից կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից պաշտպանելու համար: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի պարտադիր ժամկետային զինծառայողներին բռնություններից պաշտպանելու հարցին,
2. զինված ուժերում ցանկացած բռնության վերաբերյալ տեղեկություն դարձնել օբյեկտիվ, լրիվ եւ բազմակողմանի քննության առարկա:

30. Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդում <https://www.ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf>

2018 թվականի տարեկան հաղորդման մեջ ՄԻՊ Թաթոյանը մտահոգություն է հայտնում ռազմական ոստիկանությունում զինծառայողներին ծեծելու, ապօրինաբար այնտեղ պահելու դեպքերի առնչությամբ՝ կարելորելով զինված ուժերում զինծառայողներին խոշտանգումներից կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից պաշտպանելու համար կանխարգելիչ միջոցների ձեռնարկումը:

Խոշտանգումների արգելքի վերաբերյալ ներպետական օրենսդրության ուսումնասիրությունը

Այս բաժնում զետեղված ներպետական իրավական ակտերի ուսումնասիրությունն իրականացվել է պարզելու համար, թե այդ օրենսդրությամբ ինչ երաշխիքներ են ստեղծված խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքի ապահովման տեսանկյունից, որքանով են ներպետական օրենքները երաշխավորում ՁՈՒ-ում գրանցված միջադեպերի առթիվ հարուցված քրեական վարույթների շրջանակներում որպես կասկածյալ եւ վկա ռազմական ոստիկանություն բերված անձանց խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովումը, որքանով են այդ երաշխիքները համապատասխանում միջազգային պահանջներին:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքն առաջին հերթին ամրագրված է ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածով³¹, համաձայն որի.

1. ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի,
2. մարմնական պատիժներն արգելվում են,
3. ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Անձի՝ խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկելու արգելքը սահմանված է նաեւ ՀՀ քրեական օրենսգրքի³² 11-րդ հոդվածի 2-րդ մասով: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ քրեական օրենսգրքում խոշտանգում եզրույթը (հոդված 309.1) համապատասխանեցվել է ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի (UNCAT) պահանջներին ընդամենը 5 տարի առաջ՝ 2015թ.-ին: Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 309.1 հոդվածի՝ **խոշտանգում է հանդիսանում «Պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որեւէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ**

31. ՀՀ Սահմանադրություն <https://www.president.am/hy/constitution-2015/>

32. ՀՀ քրեական օրենսգրքը <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=69646>

խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որեւէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով»:

«Հ քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն է սահմանում՝

ա. պաշտոնատար անձանց կողմից խոշտանգումների (309.1 հոդված),
բ. ցուցմունք կամ բացատրություն տալուն հարկադրելու (341 հոդված),
գ. պաշտոնեական լիազորությունները չարաշահելու եւ անցնելու (308 եւ 309 հոդվածներ) համար:

Ըստ այդմ՝ խոշտանգողի համար նախատեսված է 4-8, որոշ ծանր հետետանքների դեպքերում՝ 7-12 տարվա ազատազրկում, որոշակի իրավունքներից զրկում: **Հարկավոր է արձանագրել, սակայն, որ ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում միայն խոշտանգման համար: Այդ օրենքով անմարդկային եւ նվաստացնող վերաբերմունքի դրսևորումների պարագայում քրեական պատասխանատվություն չի սահմանված:**

Ամրագրված չէ նաև, որ խոշտանգման, անմարդկային եւ/կամ նվաստացնող վերաբերմունքի համար մեղավոր ճանաչված անձինք չեն կարող ազատվել քրեական պատասխանատվությունից՝ վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով, ինչպես նաև համաներմամբ, քանի որ այդ հիմքերից որեւէ մեկով քրեական հետապնդման դադարեցումը անհամատեղելի է նշված իրավունքը հարգելու եւ պաշտպանելու պետության պարտավորությունների հետ եւ հակասում է դրանց, քանի որ արդյունքում անտեսվում է մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու եւ դատապարտելու հանրային շահը, որը ճանաչված է նաև ՄԻԵԴ-ի կողմից:

Այդուհանդերձ, հարկ է նշել նաև, որ 2018 թվականի մարտի 7-ին ընդունված «Ներման մասին» ՀՀ օրենքի³³ 7-րդ հոդվածով սահմանված է, որ ներում չի շնորհվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ խաղաղության եւ մարդկության անվրանգության դեմ ուղղված հանցագործության կամ խոշտանգման համար դատապարտված անձին:

Պարզելու համար, թե օրենսդրական ինչ կարգավորումներ են նախատեսված սույն զեկույցի դիտարկման առարկա հանդիսացող ՁՈՒ-ում գրանցված միջադեպերի առթիվ հարուցված քրեական վարույթների շրջանակներում որպես կասկածյալ եւ վկա ռազմական ոստիկանություն բերված անձանց խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովման համար, նախ և առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել քրեական գործերով վարույթի կարգը սահմանող «Քրեական դատավարության օրենսգիրք»-ը: Այս օրենսգրքով սահմանված վարույթի կարգը պարտադիր է դատարանների, հետաքննության, նախաքննության և դատախազության մարմինների, ինչպես նաև դատավարության մասնակիցների համար:

33. «Ներման մասին» ՀՀ օրենք <https://www.artis.am/documentView.aspx?docID=120597>

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԲ

Քրեական դատավարության ընթացքում անձի՝ խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկելու արգելքը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի³⁴ 11-րդ հոդվածի 7-րդ մասով: Այն սահմանում է, որ **քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաեւ այլ դաժան վերաբերմունքի:** Նույն հոդվածով արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից եւ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաեւ այլ անօրինական գործողությունների միջոցով:

«Քրեական դատավարության օրենսգրքը» սահմանում է, որ **ոչ ոք չի կարող քրեական գործով ձերբակալվել, խուզարկվել, կալանավորվել, դատապարտվել, ենթարկվել բերման եւ դատավարական հարկադրանքի այլ միջոցների, ինչպես նաեւ իրավունքների ու ազատությունների այլ սահմանափակումների այլ կերպ, քան օրենքով սահմանված հիմքերով եւ կարգով** (<հոդված 7):

Պետք է արձանագրել, որ միջազգային պահանջներին համապատասխան, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 105 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել եւ որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, անձին ծաղրի ենթարկելով, ինչպես նաեւ այլ անօրինական գործողություններով:

Քրեական դատավարության օրենսգրքով սահմանվում է քրեական վարույթների շրջանակներում ներգրավված անձանց կարգավիճակները:

Ըստ 62-րդ հոդվածի՝ կասկածյալ է համարվում այն անձը,

1. որը ձերբակալվել է հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով,
2. որի նկատմամբ մինչեւ մեղադրանք առաջադրելը խափանման միջոց ընտրելու մասին որոշում է կայացված:

Քրեական դատավարության օրենսգրքի 1311 հոդվածի համաձայն՝ հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո երեք ժամվա ընթացքում կազմվում է ձերբակալելու մասին արձանագրություն, որտեղ նշվում են կազմելու ժամանակը (օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, րոպեն), ձերբակալման ժամանակը, վայրը, հիմքը (հիմքերը) եւ նպատակը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այն հոդվածը, որով նախատեսված հանցանքի կատարման մեջ կասկածվում է

34. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=68011>

ձերբակալվածը, նրա անձնական խուզարկության արդյունքները եւ այլ հանգամանքներ, ինչպես նաեւ ձերբակալվածի հայտարարություններն ու միջնորդությունները:

Օրենքը սահմանում է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինը կասկածյալի կարգավիճակով ձերբակալվածին չի կարող պահել 72 ժամից ավելի, իսկ անձը դադարում է կասկածյալ լինելուց նրան արգելանքից ազատելու, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը վերացնելու կամ նրան որպես մեղադրյալ ներգրավելու մասին քրեական հետապնդման մարմնի կողմից որոշում ընդունելու պահից:

Նույն օրենսգրքի 211 հոդվածը սահմանում է, որ ձերբակալված կասկածյալն իրավունք ունի հարցաքննվելու պաշտպանի մասնակցությամբ: **Պաշտպանի մասնակցությունն անհապաղ ապահովելու անհնարինության դեպքում քննիչը պարտավոր է նրա մասնակցությունն ապահովել կասկածյալին արգելանքի վերցնելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում: Հարցաքննությունն սկսելուց առաջ քննիչը կասկածյալին բացատրելու է կասկածանքի էությունը, ինչպես նաեւ նրա իրավունքները՝ ներառյալ ցուցմունքներ տալուց, հարցաքննությունը պաշտպանի մասնակցությամբ անցկացնելու կամ պաշտպանի մասնակցությունից հրաժարվելու (բացառությամբ պաշտպանի մասնակցության պարտադիր լինելու դեպքերի) իրավունքները:**

Քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է նաեւ հարցաքննության տեւողությունը: **Ըստ օրենսգրքի 205 հոդվածի՝ հարցաքննությունը չի կարող տեւել անընդմեջ չորս ժամից ավելի: Այն կարող է շարունակվել հարցաքննվող անձին հանգստի եւ սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո: Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տեւողությունը չի կարող գերազանցել ութ ժամը:**

Հաշվի առնելով վարույթների շրջանակում կասկածյալի կամ վկայի կարգավիճակով ներգրավված պարտադիր ժամկետային զինծառայողի ծառայություն կրելու հետ կապված եւ դրանից բխող առանձնահատկությունները՝ հարցաքննության ընթացքում պաշտպանի ներգրավման խնդիրը դառնում է առաջնային, քանի որ **ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի ներկայիս ձեւակերպմամբ քրեական գործով վարույթին փաստաբանի մասնակցությունը պարտադիր է մեղադրյալի կարգավիճակ ստացած ժամկետային զինծառայողի համար միայն. կասկածյալի կամ վկայի կարգավիճակով ներգրավված զինծառայողների հարցաքննության ընթացքում փաստաբանի մասնակցությունն ապահովելու պարտադիր պահանջ օրենսդրությամբ նախատեսված չէ:**

Գործնականում, սակայն, վկայի կամ կասկածյալի կարգավիճակով վարույթում ներգրավված զինծառայողների պաշտպան ունենալու իրավունքից օգտվելու հնարավորությունները սահմանափակված են՝ պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

ա) հարցաքննվող զինծառայողները տեղյակ չեն նման իրավունքի մասին, բ) քրեական հետապնդման մարմինները չեն տեղեկացնում հարցաքննվող զինծառայողներին պաշտպանի մասնակցությամբ հարցաքննությունը

իրականացնելու իրավունքի մասին,
գ) քրեական հետապնդման մարմիններն անտեսում են պաշտպանի մասնակցությամբ հարցաքննությունն իրականացնելու հարցաքննվողի պահանջը՝ **հաճախ նշելով, որ սա հարցաքննությունն չէ, այլ ուղղակի զրույց:**

ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրքը չի պարունակում հետաքննության մարմնի (ռազմական ոստիկանության) հետ հարաբերություններում որպես վկա կամ կասկածյալ ներգրավված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցնող զինծառայողի անվտանգությունը երաշխավորող կամ այնպիսի կարգավորումներ, որոնց ուժով ռազմական ոստիկանության աշխատակիցը կաշկանդված կլինի անօրինական գործողություններ կատարել զինծառայողի նկատմամբ:

ԶՌ-ում գրանցված միջադեպերի առթիվ հարուցված քրեական վարույթների շրջանակներում որպես կասկածյալ եւ վկա ռազմական ոստիկանություն կանչված/բերված անձանց խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովման հետ առնչվող խնդիրների կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ հաշվի առնելով ՌՌ-ին օրենքով տրված լիազորությունների բազմազանությունը (եյնելով այդ կառույցի առջեւ դրված խնդիրների տարաբնույթ լինելուց), քրեական վարույթների շրջանակներում այդ կառույցը կարող է հանդես գալ տարբեր իրավիճակներում եւ փուլերում, տարբեր ֆունկցիոնալ դերերով: Վարույթների շրջանակներում ՌՌ-ն կարող է հանդես գալ որպես՝

- հետաքննության մարմին,
- զինծառայողների կողմից նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունները կանխող եւ խափանող կառույց,
- կայազորային մեկուսարանների եւ կայազորային կարգապահական վաշտերի գործունեությունն ապահովող կառույց, եւ այլն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածով նախատեսվում է, որ ՀՀ ռազմական ոստիկանությունը **հետաքննության մարմին է՝** օրենքով նրա իրավասությանը հանձնված գործերով: Օրենսգրքի 57-րդ հոդվածով սահմանված են ՌՌ-ի լիազորությունները՝ որպես հետաքննության մարմին: Որպես հետաքննության մարմին, ի թիվս այլ գործառույթների, ՀՀ ռազմական ոստիկանությունն իրավասու է.

- հանցագործությունները և դրանք կատարող անձանց բացահայտելու, հանցագործությունը կանխելու և խափանելու նպատակով համապատասխան օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական միջոցառումներ ձեռնարկելու,
- մինչև քրեական գործ հարուցելը նախապատրաստվող նյութերով կատարելու դեպքի վայրի զննություն, հետազոտման համար վերցնելու նմուշներ և նշանակելու փորձաքննություն, եւ այլն:

Միևնույն ժամանակ ՌՌ-ի լիազորություններն ու պարտականությունները սահմանված են նաև 2002 թ.-ից գործող «Ռազմական ոստիկանության մասին»³⁵ ՀՀ օրենքով, իսկ կայազորային մեկուսարաններում ՌՌ ծառայողի համար սահմանված իրավունքների ու պարտականությունների

35. «Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ օրենք <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=30298>

նկարագիրը եւ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար ՌՌ ծառայողի մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տեսանկյունից ներկայացվող պահանջները հստակեցվել են միայն վերջերս՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ին ընդունված «Ռազմական ոստիկանության մասին ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքով³⁶:

«ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔ

«Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 1-ին և 4-րդ հոդվածների բովանդակությունից, մասնավորապես, հետեւում է, որ ռազմական ոստիկանությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում գործող կառույց է, որն՝

ա) իրականացնում է հետաքննություն զինվորական հանցագործությունների, ինչպես նաեւ զինծառայողների ենթադրյալ մասնակցությամբ հանցագործությունների վերաբերյալ գործերով, կանխում, նախականխում եւ խափանում է զինծառայողների կողմից նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունները, բ) ապահովում է ԶՈւ տրանսպորտային միջոցների նպատակային շահագործումը եւ անվտանգ երթևեկությունը, գ) ապահովում է կայագորային մեկուսարանների գործունեությունը, դ) որպես առանձին զորամիավորում մասնակցում է Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:

Վերոգրյալից հետեւում է, որ ռազմական ոստիկանության կողմից իրականացվող գործառույթները պայմանականորեն կարելի է բաժանել 2 խմբի՝

- ԶՈւ-ում օրինականության, հասարակական կարգի ապահովմանն ուղղված գործառույթներ (ա-գ կետեր),
- պաշտպանական գործառույթ (դ կետ):

Եթե Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը որպես առանձին զորամիավորում մասնակցելու գործառույթի իրականացման ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության ենթակայությամբ գործելու հանգամանքը միանգամայն օրինաչափ է, ապա ՀՀ զինված ուժերում հանցագործությունների հետաքննության, կանխման, օրինականության ապահովման գործառույթներն իրականացնելիս ՀՀ պաշտպանության նախարարության ենթակայության ներքո գտնվելն, ընդհակառակը, խնդրահարույց է, քանի որ այս գործառույթներն իրականացնելիս ռազմական ոստիկանությունը չի կարող համարվել անկախ մարմին հենց ենթակայության կամ ինստիտուցիոնալ կապի պատճառով, որի պայմաններում վտանգ կա, որ բախում կարող է առաջանալ օրինականության ապահովման (օրինակ՝ կատարված հանցագործությունը թարմ հետքերով օբյեկտիվորեն հետաքննելու) եւ գերատեսչական ենթակայությամբ պայմանավորված կամ կորպորատիվ շահերի (օրինակ՝ բարձրաստիճան սպայի մասնակցությամբ հանցագործության հանգամանքները չբացահայտելու

36. «Ռազմական ոստիկանության մասին ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=119031&fbclid=IwAR2AGgSRleFTn7uibDbNTbEv-0S4GkiaFo91bgdMYCj8UH9d-66KHIXITHbw>

Եւ կատարվածի այլ վարկած ներկայացնելու նպատակով ապացույցների կեղծման) միջեւ:

«ՁԵՐԲԱԿԱՎՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՆՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔ»

Հայաստանի Հանրապետության Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ձերբակալված անձին արգելանքի եւ կալանավորված անձին կալանքի տակ պահելու ընդհանուր սկզբունքները, պայմանները եւ կարգը, ձերբակալված եւ կալանավորված անձանց իրավունքները, դրանց ապահովման երաշխիքները, նրանց պարտականությունները, ինչպես նաեւ արգելանքից եւ կալանքից ազատելու կարգը սահմանված են **«Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենք»-ով³⁷:**

Վերջինիս երկրորդ հոդվածում, մասնավորապես, նշվում է, որ **ձերբակալված անձին արգելանքի կամ կալանավորված անձին կալանքի տակ պահելն իրականացվում է օրինականության, ձերբակալված կամ կալանավորված անձանց՝ օրենքի առաջ հավասարության, մարդասիրության, անձի իրավունքները, ազատությունները եւ արժանապատվությունը հարգելու սկզբունքների հիման վրա՝ ՀՀ Սահմանադրությանը, քրեական եւ քրեական դատավարության օրենսգրքերին, ինչպես նաեւ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին համապատասխան:**

Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենքով սահմանվում է նաեւ, որ **ձերբակալված կամ կալանավորված անձանց նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելը, ինչպես նաեւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող գործողությունները արգելվում են:** Սույն զեկույցի հիմնական թեմայի առնչությամբ **անհանգստություն է առաջացնում այն հանգամանքը, որ այս օրենքը չի պարունակում խոշտանգումների արգելքի մասին հիշատակում:**

«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ»

Խոշտանգումների արգելքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական դաշտի մասին առավել ամբողջական պատկերացում կազմելու համար հարկ է նշել, որ ՀՀ կառավարության կողմից, այնուամենայնիվ, գոյություն ունեցող օրենսդրության արդիականացման եւ միջազգային պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ ջանքեր իրականացվում են: Ոլորտը կարգավորող օրենսդրության բարելավման ուղղությամբ նման գործողությունները վերջին տարիներին տեղ են գտնում Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրերում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 483-Ն որոշմամբ հաստատված, մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից

37. «Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=43743>

բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի 32-րդ կետով սահմանված է, որ պետք է մեխանիզմներ ստեղծել կայազորային մեկուսարաններում մշտադիտարկում իրականացնող դիտորդական խմբի գործունեության համար՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության պահանջները եւ միջազգային լավագույն փորձը: Հիմնվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 483-Ն որոշմամբ³⁸ հաստատված մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թթ.-ի միջոցառումների ծրագրի 32-րդ կետի պահանջների վրա, ինչպես նաեւ ղեկավարվելով ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 21-րդ եւ «Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածներով, 18.01.2019թ. «ՀՀ պաշտպանության նախարարն արձակել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կայազորային կարգապահական մեկուսարանում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 1-Ն հրամանը: Այդուհանդերձ, պետք է նշել, որ մինչ զեկույցի նախապատրաստման օրը խմբի ձեւավորման վերաբերյալ հայտարարություն չի եղել, այսինքն՝ նման խումբ մինչ այժմ ձեւավորված չէ:

ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1978-Լ որոշմամբ հաստատված՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը եւ դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը³⁹ հաստատելու մասին որոշման 2-րդ հավելվածով, կառավարության կողմից նախանշվել են մի շարք գործողություններ, որոնք ուղղված են լինելու հանրապետությունում խոշտանգումների թվի նվազեցմանը եւ խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովմանը: Գործողությունների մի մասը վերաբերում է հենց զինված ուժերում գրանցված միջադեպերի առթիվ հարուցված քրեական վարույթների շրջանակներում ներգրավված անձանց խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովմանը:

Ի թիվս այլ գործողությունների՝ 2020-2022 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված է, օրինակ՝

- ռազմական ոստիկանության բաժիններում տեղադրել տեսաձայնագրման միջոցներ,
- օրենսդրորեն ամրագրել վաղեմության ժամկետի կիրառման սահմանափակումներ խոշտանգման հանցանքի նկատմամբ,
- մշակել «Ֆիզիկական ուժեղ ցավ» եւ «հոգեկան տառապանք» եզրույթների մեկնաբանման եւ կիրառման վերաբերյալ ուղեցույցներ՝ միջազգային չափանիշներին համապատասխան,
- ստեղծել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմ,
- վերապատրաստումներ իրականացնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ ոստիկանների, ռազմական

38. «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 483-Ն որոշում <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=113223>

39. Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը եղրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը <https://www.e-gov.am/gov-decrees/item/33272/>

ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների, հոգեբուժական, երեխաների խնամքի հաստատությունների աշխատողների, քրեակատարողական ծառայության ծառայողների եւ բժշկական անձնակազմի համար:

Ըստ ՀՀ կառավարության, 26.12.2019թ. թիվ 1978-Լ որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության առաջնահերթությունները պայմանավորված են հենց մարդու իրավունքների ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման հրամայականով: Ուշագրավ է, որ վերոնշյալ գործողությունների մեծ մասը բխում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության դեմ կայացված վճիռների եւ դրանց կատարողականների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից կայացված որոշումներով սահմանված պահանջներից, ինչպես նաեւ ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի ուղղած հարցերի բովանդակությունից: Անհրաժեշտ է արձանագրել, որ գործողությունների մշակման գործում ներդրում են ունեցել նաեւ տեղական իրավապաշտպան հասարակական կազմակերպություններն ու միջազգային կառույցները: Իրավապաշտպան կառույցների կողմից բարձրացված, ոլորտին առնչվող մի շարք հարցադրումներ եւ առաջարկներ, այնուամենայնիվ, շարունակում են անպատասխան մնալ: Դրանցից օրակարգային կարելի է համարել, օրինակ, խոշտանգումների կամ դաժան կամ անմարդկային վերաբերմունքի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացման խնդիրը՝ հանրության շրջանում նման երեւույթների նկատմամբ անհանդուրժողականություն ամրապնդելու համար: Ցավոք, այս ուղղությամբ գործողություններ 2020-2022 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված չեն:

Այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ վերոնշյալ գործողությունների պատշաճ իրականացման եւ ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի բարելավման արդյունքում, կառավարության կողմից ակնկալվող հաստատականության եւ հետետողականության դրսեւորման պարագայում, հնարավոր կլինի նվազեցնել խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի դրսեւորումները: Անհրաժեշտ է ընդգծել, սակայն, որ շատ դեպքերում ոլորտի խնդիրները գտնվում են ոչ միայն օրենսդրական, այլ օրենքի կիրառման պրակտիկայի հարթությունում:

ՌՌ բերված անձանց նկատմամբ անմարդկային կամ դաժան վերաբերմունքի կամ խոշտանգումների վերաբերյալ հայտնի դարձած որոշ փաստեր

Ստորեւ ներկայացվում են «ԶՈՒ-ում տեղի ունեցած հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթների շրջանակներում ներգրավված անձանց «խոշտանգումների արգելում» իրավունքի ապահովումը» ծրագրի ընթացքում ԽԵ-ի կողմից վերհանված, զինված ուժերում տեղի ունեցած հանցագործությունների առթիվ հարուցված քրեական վարույթների շրջանակներում ներգրավված անձանց «խոշտանգումների արգելում» իրավունքի ոտնահարման դեպքերը: Դեպքերի ներկայացումը միտված է ի ցույց դնելու քննարկվող ոլորտի պատասխանատու մարմինների կողմից կատարված ապօրինություններն ու նրանց գործողությունների անհամապատասխանությունը ոլորտին առնչվող միջազգային եւ ներպետական օրենսդրության պահանջներին:



1. 2012 թ. նոյեմբերի 5-ին ՀՀ զինված ուժերում արձանագրվել է մահվան դեպք. ժամը 00:30-ի սահմաններում մարտական հենակետում հայտնաբերվել է շարքային զինծառայող Ս. Ա.-ի դին: Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում ՀՀ քր. օր.-ի 110 հոդվածի 1-ին մասով (ինքնասպանության հասցնելը) հարուցվել է քրեական գործ: Պաշտոնական վարկածով դեպքը որակվել է որպես ինքնասպանություն: Ս. Ա.-ին ինքնասպանության հասցնելու համար մեղադրանք է առաջադրվել նույն զորամասի երկու զինծառայողի՝ Ա. Խ.-ին եւ Ա. Մ.-ին:

Դեպքի նկարագրություն. Ս. Ա.-ի մահվան գործով վկա Ա. Թ.-ն, փաստաբանական հարցման ենթարկվելով փաստաբանի կողմից, հայտնել է, որ դեպքից հետո իրեն եւ տվյալ մարտական հենակետի այլ զինծառայողների տեղափոխել են Մեղրի քաղաքի ՌՈՒ բաժին, իսկ 4-5 օր անց՝ Կապանի ՌՈՒ բաժնի մեկուսարան, որտեղ իրեն առանձին խցում պահել են 4 օր: Այդ ընթացքում իրենից պահանջել են, որպեսզի կեղծ ցուցմունքներ տա այն մասին, իբր դեպքի նախօրեին իրենց հենակետ եկած Ա. Խ.-ն, իմանալով, որ Ս. Ա.-ն թաքուն քաղցրավենիք է ուտում, նրան հայիոյել է, նվաստացրել արժանապատվությունը, ինչի արդյունքում էլ Ս. Ա.-ն ինքնասպանություն է գործել: Վկան ասել է, որ նման բան չի եղել. նա չի տեսել, որ Ա. Խ.-ն հայիոյել է Ս. Ա.-ին, սակայն իրենից պահանջել են ցուցմունք տալ՝ սպառնալով քրեական պատասխանատվության ենթարկել: Անգամ դրանից հետո վկան չի ցանկացել սուտ ցուցմունք տալ: Կապանի ՌՈՒ քննչական բաժնի պետը նրան հարվածել է: Ի վերջո, վախենալով, որ իրեն քրեական պատասխանատվության կենթարկեն, Ա. Թ.-ն տվել է պահանջված կեղծ ցուցմունքը: Այդ օրերին նա տեսել է իր համաձայնակից Թ. Մ.-ին, ում դեմքը կարմրած է եղել, կռահել է, որ նրան ծեծել են: Կապանի ՌՈՒ մեկուսարանում պահվելու 5-րդ օրը իրեն եւ Թ. Մ.-ին տեղափորել են մի խցում (որտեղ մնացել են շուրջ 15 օր): Վերջինս պատմել է, որ իրեն «լավ ծեծել» են: Հենակետի ավագ, լեյտենանտ Գ. Մ.-ն փաստաբանական հարցման ընթացքում հայտնել է, որ Մեղրի քաղաքի ՌՈՒ բաժանմունքում Սյունիքի մարզի ՌՈՒ վարչության պետը հարվածներ է հասցրել իր մարմնի տարբեր մասերին, հետագայում ՌՈՒ Կապանի բաժնում քրեական պատասխանատվության ենթարկվելու սպառնալիքների, ճնշումների ազդեցության տակ նա ստիպված կեղծ ցուցմունքներ է տվել անմեղ մարդկանց դեմ: Դատական քննության ընթացքում տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչը միջնորդել է անթույլատրելի ապացույց ճանաչել ՀՀ ՁՈՒ N զորամասի վերոնշյալ երեք զինծառայողների ցուցմունքներն ու առերես հարցաքննությունները, որոնք, նրանց վկայությամբ, կորզվել են ճնշումներով եւ բռնությամբ, սակայն հենց այս ցուցմունքներն են դրվել մեղադրանքի, ապա՝ նաեւ դատավճռի հիմքում:

2. 2011թ.-ի փետրվարի 12-ին հրազենի գործադրումից զոհվել է 21-ամյա Թ. Ա.-ն: Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ինքնասպանության հասցնելու հատկանիշներով՝ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի առաջին մասով՝ «սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը»:

Դեպքի նկարագրություն. Թ. Ա.-ի մահվան գործով 30.08.2012թ.-ի իր ցուցմունքում գործով առանցքային վկա Ս. Ա.-ն հրաժարվել է նախաքննական ցուցմունքից եւ դատարանին պատմել, որ դեպքի օրը Թ. Ա.-ի վաշտի բոլոր 24 զինձառայողներին, այդ թվում՝ նաեւ իրեն, տեղափոխել են Ստեփանակերտի ՌՈ բաժին: Վկային վերցրել են կալանքի տակ եւ պահել 7 օր: Մեկուսարանի հակասանիտարական վիճակով պայմանավորված՝ նրա մոտ առաջացել է մաշկային հիվանդություն, ինչի պատճառով նրան տեղափոխել են զինվորական հոսպիտալ: Ըստ վկայի՝ մեկուսարանում պահվելու առաջին 4-5 օրերին իրեն հարցաքննել է ՌՈ եւ քաղաքացիական հագուստով 8-10 հոգուց բաղկացած մի խումբ: Նրան վախեցրել, ծեծել, խոշտանգել եւ ստիպել են տալ ակնհայտ կեղծ ցուցմունքներ, որոնց մի մասը նա այդպես էլ չի գրել: Վկան, այդուհանդերձ, նշված ժամանակահատվածում գրել է 4-5 ցուցմունք, որոնցից սակայն միայն մեկն է դրվել քրեական գործի հիմքում, որից էլ վկան դատարանում հրաժարվել է:

3. 2012 թվականի փետրվարի 23-ին, ժամը 13:50-ի սահմաններում, ՀՀ ՊՆ Ն զորամասի մարտական հենակետում գլխի շրջանում մահացու հրազենային վիրավորում է ստացել ժամկետային զինձառայող, շարքային Ա. Ա.-ն: Վերջինիս մահվան փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայության վեցերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քր. օր-ի 104 հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել եւ հիմնավորվել է, որ վերջինս սպանվել է համաձայակցի՝ նույն զորամասի ժամկետային զինձառայող, շարքային Ի. Ե.-ի կողմից արձակված գնդակից:

Դեպքի նկարագրություն. Ա. Ա.-ի մահվան գործով նախաքննության ընթացքում մեղադրյալ Ի. Ե.-ն ցուցմունք է տվել, որ իրեն ծեծել են, խոշտանգել, ինչի շնորհիվ միայն հաջողվել է կորզել ինքնախոստովանական ցուցմունքներ: Չնայած այն բանին, որ ոչ նախաքննական մարմինը, ոչ դատարանն այդ մասով քննություն չեն կատարել, սակայն Իջեան քաղաքի ՌՈ-ում կատարված դատաբժշկական զննությամբ Ի. Ե.-ի մարմնի տարբեր մասերում հայտնաբերվել են մի շարք մարմնական վնասվածքներ, որոնք Ի. Ե.-ն չէր կարող ինքն իրեն հասցնել: Դրանք առաջացել են նրա ցուցմունքում նշված ժամանակահատվածում:

4. 2016 թվականի ապրիլի 6-ին N կրակային դիրքում մահացու հրազենային վիրավորումներով հայտնաբերվել են պարտադիր ժամկետային զինծառայողներ, շարքայիններ Գ. Ա.-ն եւ Ս. Ա.-ն: Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ 5-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 6-րդ կետերի հատկանիշներով:

Դեպքի նկարագրություն. Գ. Ա.-ի եւ Ս. Ա.-ի մահվան գործով մեղադրյալ Դ. Դ.-ն հայտնել է, որ Վարդենիսի ՌՌ բաժնի աշխատակիցներն իրեն ահաբեկել են եւ կորզել կեղծ ինքնախոստովանական ցուցմունքներ: Վարդենիսի ՌՌ բաժնում ռազմական ոստիկանության աշխատակիցներն իրեն առաջարկել են ներկայանալ մեղայականով: Վերջինում նա նշել է, որ իբր վրանի դիմաց սպանել է Գ. Ա.-ին, ինչից հետո, մտնելով վրան, մուտքի մոտից կրակել ու սպանել է նաեւ Ս. Ա.-ին: Դրանից հետո, փաստաբանի ներկայությամբ, Դ. Դ.-ն հրաժարվել է իր ինքնախոստովանական ցուցմունքից: Կեղծիքը հիմնավորելու նպատակով, Ֆ. Հ.-ին ու Հ. Ս.-ին Վարդենիսի ՌՌ-ում ստիպել են կեղծ ցուցմունքներով հաստատել Դ. Դ-ումիկյանի գրածը:

5. Ըստ պաշտոնական վարկածի, 2013թ.-ի հուլիսի 31-ին, ժամը 13:20-ի սահմաններում Քանաքեռի զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Մ. Մ.-ն, գտնվելով պահակակետի դիտաշտարակում, իրեն ամրակցված ԱԿՍ-74 տիպի ինքնաձիգից ինքն հասցրել է մահացու հրազենային վիրավորում: Փաստի առթիվ ՀՀ քր. օր-ի 110 հոդ. 1-ին մասով (ինքնասպանության հասցնելը) ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ:

Դեպքի նկարագրություն. Մ. Մ.-ի մահվան գործով վկա Ա. Ա.-ն դատարանում ցուցմունք է տվել՝ հայտնելով, որ Մ. Մ.-ին անձամբ չի ճանաչել, իսկ նախաքննության ժամանակ տված ցուցմունքներն իրականությանը չեն համապատասխանում, դրանք իրեն թելադրել են ռազմական ոստիկանության երկու աշխատակիցներ, հետագայում նաեւ քննչականում իրեն ճնշել են, ծեծել եւ փայտով վախեցրել: Նախաքննական ցուցմունքներն ինքն է գրել, սակայն դրանք չի պնդում, քանի որ այդ ցուցմունքները տվել է ճնշման եւ վախի ազդեցության տակ: 09.06.2015թ.-ին դատարանում ցուցմունք է տվել վկա Ա. Ա.-ն՝ հայտնելով, որ նախաքննության ընթացքում իր կողմից հայտնած տեղեկություններն իրականությանը չեն համապատասխանում, ցուցմունք տալիս ինքը պապի եւ տատի մահվան պատճառով եղել է հոգեպես ընկճված վիճակում, քննիչի կողմից իրեն ինչ թելադրվել է՝ այն էլ գրել է: Նա նշել է նաեւ, որ վերջին անգամ ցուցմունք տալիս ցանկացել է հրաժարվել իր կողմից հայտնած տեղեկություններից, սակայն քննիչն իրեն ասել է, որ հրաժարվելու դեպքում քրեական պատասխանատվության կենթարկվի: Վկան վախեցել է եւ չի հայտնել այդ մասին: 18.06.2015թ. քննչական կոմիտեն կայացրել է վկա Ա. Ա.-ի կողմից իր նախաքննական ցուցմունքները ճնշումների

ազդեցության տակ տրված լինելու դատարանում 02.06.2015թ. արված հայտարարությունների կապակցությամբ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում: Ա. Ա.-ն բացատրություն է տվել, որ ռազմական ոստիկանության աշխատակիցը զրույցի ընթացքում ձեռքին փայտ է ունեցել, որով սպառնացել է եւ մեկ անգամ ձեռքով հարվածել իր ծոծրակին: Ա. Ա.-ն հրաժարվել է կատարվածի մասին հանցագործության մասին հաղորդում ներկայացնել՝ հայտնելով, որ որեւէ մեկի դեմ բողոք չունի եւ չի ցանկանում, որ քրեական գործ հարուցվի:

Դեպքի նկարագրություն. Նույն ժամկետային զինծառայողի մահվան (ըստ պաշտոնական վարկածի՝ ինքնասպանություն) առթիվ հարուցված գործով ռազմական ոստիկանության աշխատակիցները հեռախոսազանգի միջոցով կապվել են նրա համադասարանցիներից մեկի հետ, ուշ երեկոյան հրավիրել ռազմական ոստիկանություն: Համադասարանցի աղջիկը պնդում է, որ գործի շրջանակներում իրեն մի քանի անգամ հրավիրել են ռազմական ոստիկանություն, սակայն ոչ մի անգամ չի գրանցվել նրա ելումուտն այնտեղ. մտնելիս եւ դուրս գալիս որեւէ տեղ չի ստորագրել: Առաջին այցելության ընթացքում նրան ուղեկցել են «պետի» մոտ. աշխատասենյակում նրա հետ խոսել (հարցաքննել) է հինգ աշխատակից, ընդ որում, նրանցից ոչ ոք չի ներկայացել: Չնայած ուշ ժամին՝ հանդիպումը ձգվել է 1.5-2 ժամ, սենյակում ներկա բոլոր ոստիկաններն անդադար հարցեր են ուղղել աղջկան, եւ չնայած նրանց քաղաքավարի վերաբերմունքին (հավատացրել են, որ նա ոչ մեղադրյալ է, ոչ էլ կասկածվում է ինչ-որ բանում, պարզապես իր օգնության կարիքն ունեն համադասարանցու մահվան քննության գործում) ուղղակի ճնշման փորձեր են արվել: Երիտասարդ աղջիկը վերհիշում է, որ իրեն անընդհատ փորձում էին ներշնչել, որ համադասարանցին ինքնասպանություն է գործել ու ամեն երկրորդ հարցն այն էր, թե կարո՞ղ էր ինքնասպան լինել, թե՞ ոչ: Մեկ անգամ նույնիսկ պնդել են, որ գիտեն, որ հենց իր պատճառով է ինքնասպանությունը տեղի ունեցել: Հաջորդ հանդիպումների ընթացքում պնդել են, որ ինքնասպանություն գործած տղան դեպքի օրը զանգահարել է իրեն, այդ պատրվակով վերցրել եւ զննել են հեռախոսը: ՌՈՒ աշխատակիցների հետապնդումները վերջացել են միայն այն ժամանակ, երբ չորրորդ անգամ հանդիպելու խնդրանքով հեռախոսազանգին ի պատասխան նա պահանջել է ծանուցագիր ուղարկել, որում կնշվի այդ գործով իր ունեցած կարգավիճակը:

Եզրակացություններ

Վերոնշյալ իրավական վերլուծություններն ու ներկայացված օրինակները գալիս են ապացուցելու, որ խոշտանգումների արգելքի երաշխիքներ ստեղծող ներպետական օրենսդրությունը միջազգային պահանջներին համապատասխանեցնելու եւ խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերը բացառելու ուղղությամբ Հայաստանի Հանրապետությունում դեռ բազմաթիվ անելիքներ կան: Պետք է արձանագրել, որ հատկապես վերջին հինգ տարիների ընթացքում ջանքեր գործադրվել են խոշտանգումները, ներառյալ խոշտանգումներին մասնակցությունը եւ հրահրումը, օրենսդրությամբ որպես հանցագործություն ճանաչելու եւ, առհասարակ, ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի բարելավման ուղղությամբ: Այլ հարց է, թե որքանով են այդ ջանքերը եւ գոյություն ունեցող ներպետական մեխանիզմներն ու քննարկվող ոլորտի պատասխանատու մարմինները արդյունավետ եղել այդ օրենսդրության կիրառումն ապահովելու գործում:

Առաջին հերթին անհրաժեշտ է արձանագրել, որ բազմաթիվ խնդիրներ կան խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերի առիթով արդյունավետ, օբյեկտիվ եւ բազմակողմանի քննություն իրականացնելու հարցում: Այստեղ լրջագույն խնդիրների եւ թերացումների մասին են վկայում ՄԻԵԴ-ի կողմից Հայաստանի Հանրապետության դեմ կայացված մի շարք վճիռները, որոնցում արձանագրվում է, որ պետությունը բավարար ջանքեր չի գործադրել դեպքերի առիթով արդյունավետ, օբյեկտիվ եւ բազմակողմանի քննություն իրականացնելու գործում: ՀՀ զինված ուժերում գրանցված միջադեպերի արդյունքում հարուցված քրեական վարույթների կապակցությամբ ՄԻԵԴ-ի կողմից վերջին տարիներին կայացված մի շարք վճիռներում արձանագրված է, որ ազգային իշխանությունները չեն իրականացրել արդյունավետ քննություն՝ ՌԻ-ում գտնվելու ընթացքում վատ վերաբերմունքի ենթարկվելու դիմումատուների բողոքների կապակցությամբ: Անգամ այն դեպքերում, երբ ՄԻԵԴ-ը ճանաչել է քաղաքացու նկատմամբ դաժան, վատ վերաբերմունքի կամ խոշտանգման փաստը եւ որ դիմումատուների կողմից իրենց նկատմամբ վատ վերաբերմունքի մասին հայտարարությունների կապակցությամբ իրականացված քննությունն արդյունավետ չի եղել՝ ՀՀ կառավարությունը մինչ օրս չի ձեռնարկել գործուն քայլեր պատասխանատու պաշտոնյաներին հայտնաբերելու եւ պատժելու ուղղությամբ:

Անհրաժեշտ է նշել նաեւ, որ չնայած «խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիան» (UNCAT) պահանջում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավոր է իր իրավագործության ներքո գտնվող ցանկացած տարածքում կանխել դաժան, անմարդկային եւ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի մյուս ձեւերը, Հայաստանի Հանրապետության «Քրեական օրենսգիրքը» անմարդկային եւ նվաստացնող վերաբերմունքի դրսեւորումների պարագայում քրեական պատասխանատվություն չի նախատեսում:

Ինչպես սահմանված է «ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոնվենցիայում»՝ պետությունները պարտավոր են հետաքննել խոշտանգումների կամ

դաժան վերաբերմունքի այլ դեպքերը, նույնիսկ, եթե այդ մասին պաշտոնական բողոք չի ներկայացվել: Օրինակները, սակայն, ցույց են տալիս, որ դեպքերի բացահայտման ուղղությամբ համապատասխան քայլեր չեն ձեռնարկվում՝ անգամ խոշտանգման ենթադրյալ զոհերի պաշտոնական բողոքի առկայության պարագայում: Այդ մասին խոսում են տարբեր տարիներին ՀՀ ՄԻՊ-ի տարեկան զեկույցներում եւ հաղորդումներում ներկայացվող փաստերը, ինչպես նաեւ սույն զեկույցում ներկայացված փաստական տվյալները: Ինդիքի առկայության մասին է վկայում նաեւ այն, որ 1993 թ.-ից՝ կոնվենցիայի վավերացման օրվանից, մինչ օրս որեւէ պաշտոնյա պատասխանատվության չի ենթարկվել խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի դրսեւորման փաստով:

Առհասարակ մտահոգիչ է, որ որոշ դեպքերում միջազգային հեղինակավոր կառույցների հստակ հարցադրումներն ու պահանջները ՀՀ կառավարության կողմից մնում են անպատասխան: Մինչ այժմ ՀՀ կառավարությունը չի ներկայացրել վիճակագրական տվյալներ եւ մանրամասն տեղեկատվություն խոշտանգումների արգելքի օրենսդրության հիման վրա հետաքննությունների եւ դատական վարույթների վերաբերյալ, որոնց կապակցությամբ պաշտոնական հարցում է արել Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն՝ «Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» գործով: Բացի այդ, անպատասխան են մնացել ռազմական ոստիկանության աշխատակիցների ցուցաբերած վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքների քանակի, բողոքների առիթով հարուցված քրեական եւ կարգապահական վարույթների քանակի, ինչպես նաեւ առհասարակ ռազմական ոստիկանության աշխատակիցների նկատմամբ հարուցված քրեական գործերի եւ կարգապահական վարույթների կիրառման վերաբերյալ ԽԿԿ-ի կողմից բարձրացված հարցերը: Մի կողմից՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ կարելու է խոշտանգումների դեմ պայքարի ուղղությամբ տարվող աշխատանքներն ու ընդունում, որ այս ուղղությամբ դեռ անելիքներ ունի, մյուս կողմից՝ ջանքեր չեն գործադրվում պաշտոնական վիճակագրություն ներկայացնելու ուղղությամբ, որի միջոցով հնարավոր կլիներ գնահատել իրականացվող գործողությունների արդյունավետությունը:

ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոնվենցիան սահմանում է, որ խոշտանգումների արդյունքում արված հայտարարությունները չեն կարող օգտագործվել որպես ապացույց: ՀՀ «Քրեական դատավարության օրենսգիրք»-ը նույնպես նախատեսում է նման սահմանափակում: Այնուամենայնիվ, ինչպես երեւում է սույն զեկույցում ներկայացված օրինակներից, որոշ դեպքերում ենթադրյալ բռնությունների արդյունքում վկաներից կորզված ցուցմունքները (ըստ քաղաքացիների պնդման) դրվել են մեղադրանքի եւ, անգամ, դատավճռի հիմքում: Ըստ որոշ քաղաքացիների՝ ՌԻ-ում անօրինական ճանապարհով ապացույցների ստացումն, անգամ, կատարված հանցագործությունների իրական հանգամանքները բացահայտելու նպատակ չի հետապնդել, այլ դեպքի՝ իրականության հետ կապ չունեցող վարկածները կեղծ ցուցմունքներով հիմնավորելու: Այս խնդիրների մասին են վկայում նաեւ տարբեր տարիներին ՀՀ ՄԻՊ-ի տարեկան զեկույցներում եւ հաղորդումներում ներկայացվող փաստերը: Ինչպես երեւում է վերոնշյալ օրինակներից, որոշ դեպքերում նախաքննական մարմինն ուղղակի մերժել է վկաների կողմից իրենց նախաքննական ցուցմունքները ճնշումների ազդեցության տակ տրված լինելու դատարանում արված հայտարարությունների

կապակցությամբ քրեական գործ հարուցել՝ անգամ ՀՀ ՄԻՊ-ի միջնորդություններից հետո:

Իր զեկույցներում Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկել է խրախուսել զինված ուժերում խոշտանգումների եւ այլ դաժան վերաբերմունքի դեպքերի մասին հաղորդումներ ներկայացնելու պրակտիկան՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելով այդ զինծառայողներին հնարավոր վրեժխնդրությունից կամ խտրական վերաբերմունքից պաշտպանելու ուղղությամբ: Այս համատեքստում կարելի է դրական գնահատել այն, որ ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1978-Լ որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությամբ եւ դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրով նախատեսված է ստեղծել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմ: Այս պարագայում, սակայն, անհրաժեշտություն է առաջանում վկայի կամ կասկածյալի կարգավիճակով կանչված/բերված այն զինծառայողների անվտանգության ապահովման, որոնք տեղեկություն են հայտնում ենթադրյալ խոշտանգումների եւ այլ դաժան վերաբերմունքի դեպքերի մասին. **ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը դրույթներ չի պարունակում առ այն, որ հետաքննության մարմինը (ռազմական ոստիկանություն) քրեական վարույթում որպես վկա կամ կասկածյալ ներգրավված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցնող զինծառայողի անվտանգությունն ապահովելու պարտականություն ունի:**

ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոնվենցիան պահանջում է պարբերաբար վերանայել հարցաքննություն վարելու կանոններն ու ազատագրվածներին պահելու պայմանները: Սույն զեկույցի նախապատրաստման ընթացքում զինված ուժերում տեղի ունեցած միջադեպերի առիթով հարուցված քրեական գործերի ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված փաստական տվյալները ցույց են տալիս, որ այս ուղղությամբ դեռ շատ անելիքներ կան՝ թե՛ օրենսդրական, թե՛ իրավակիրառ ոլորտներում: Այս առումով, խոսքը չի վերաբերվում միայն կայագորային մեկուսարանների պայմաններին. բավական է միայն նշել, որ վկայի եւ կասկածյալի կարգավիճակով ռազմական ոստիկանություն կանչված/բերված զինծառայողների համար երաշխիքներ չեն ստեղծված պաշտպանի պարտադիր ներկայությամբ հարցաքննվելու համար, փորձը ցույց է տալիս, որ այս իրավունքից օգտվելու հնարավորությունները զինծառայողների համար շատ սահմանափակ են: Մտահոգիչ է նաեւ այն, որ ռազմական ոստիկանությունը մինչեւ հիմա պատժախուց ունի, ինչն արձանագրել է ԽԿԿ պատվիրակությունը: ԽԿԿ-ի կողմից արձանագրվել է մի դեպք, երբ ռազմական ոստիկանության կայագորային մեկուսարանը օգտագործվել է որպես կալանքի կրման վայր, ինչը հակասում է խոշտանգումների կանխարգելմանն ուղղված միջազգային եւ ՀՀ ներպետական օրենսդրության պահանջներին: Միեւնույն ժամանակ, զեկույցի նախապատրաստման ընթացքում ձեռք բերած գրեթե բոլոր օրինակները ցույց են տալիս, որ զինված ուժերում գրանցված միջադեպերի առիթով հարուցված քրեական գործերի շրջանակներում ՌՌ մեկուսարանները հաճախ ապօրինաբար որպես կալանավորման վայրեր են օգտագործվել՝ հետաքննող մարմնի համար ցանկալի ցուցմունքներ ստանալու նպատակով: Խնդրի մասին ԽԵ-ն բազմիցս է հանդես եկել հայտարարություններով եւ օրինակներում ներկայացված գրեթե բոլոր

դեպքերը պաշտոնապես արձանագծված են քրեական գործերում: Պատկան մարմինների կողմից, սակայն, դրանք պատշաճ ուշադրության չեն արժանացել՝ փաստերի վերաբերյալ չի կատարվել արդյունավետ, օբյեկտիվ, բազմակողմանի քննություն, իսկ ենթադրյալ խոշտանգման կամ վատ կամ նվաստացնող վերաբերմունքի համար մեղավորները չեն հայտնաբերվել եւ չեն պատժվել:

2010 թ.-ի մայիսի 10-21-ը ԽԿԿ պատվիրակության Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույցում նշված է, որ թեպետ մոնիտորինգային ծրագրի շրջանակներում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին ՌՌ մեկուսարաններ մուտք գործելու հնարավորություն տրվել է, սակայն ռազմական ոստիկանությանը նախապես ծանուցում է ուղարկվել նրանց այցերի վերաբերյալ: Ձեկույցի հեղինակները շեշտել են, որ լիարժեք արդյունավետության համար մոնիտորինգի խմբերի այցերը պետք է կրեն հաճախակի բնույթ եւ իրականացվեն առանց որեւէ նախազգուշացման: Խոշտանգումները եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու համար ազատագրկման վայրեր կանոնավոր այցելությունների անկախ միջազգային եւ ազգային մարմինների համակարգի ստեղծման պահանջ է դրված նաեւ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Խոշտանգումների եվ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ» (OPCAT): Այս կապակցությամբ հարկ է նշել, որ չնայած ՄԻՊ-ը ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ է ճանաչվել, սակայն, զեկույցում բերված օրինակները ցույց են տալիս, որ որոշ դեպքերում այս մեխանիզմը բավականաչափ էֆեկտիվ չի գործել: Ասվածի վառ օրինակը ՄԻՊ զեկույցից հետեւյալ մեջբերումը կարող է լինել. «...Պաշտպանի աշխատակազմում ընդունվել է ի գիտություն դատախազության տրամադրած տեղեկությունն այն մասին, որ քրեական գործի օբյեկտիվ, լրիվ եւ բազմակողմանի քննության արդյունքում գինձառայողների նկատմամբ ենթադրյալ խոշտանգում կամ վատ վերաբերմունքը դրսեւորած սպայի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է»: Այսինքն՝ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին տեղեկությունը ի գիտություն ընդունելուց բացի, ՄԻՊ-ը չի ձեռնարկել այլ միջոցներ ռազմական ոստիկանությունում ծեծելու եւ ապօրինաբար այնտեղ պահելու ենթադրյալ դեպքերի հանգամանքները ավելի մանրամասն ուսումնասիրելու ուղղությամբ:

Զինված ուժերում գրանցված միջադեպերի առթիվ հարուցված քրեական վարույթների շրջանակներում որպես կասկածյալ եւ վկա ռազմական ոստիկանություն բերված անձանց խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովման տեսանկյունից կարեւոր է նաեւ յուրտի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը: Միջազգային չափանիշների համաձայն՝ այս հարցում կարեւոր դերակատարություն պետք է ունենա քաղաքացիական հասարակությունը: 2019 թվականից գոյություն ունի Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կայազորային կարգապահական մեկուսարանում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգը հաստատելու մասին թիվ 1-Ն հրամանը, այդուհանդերձ, զեկույցի նախապատրաստման օրվա դրությամբ նման խումբ դեռեւս ձեւավորված չէ, քաղաքացիական

հասարակության կողմից մոնիթորինգ չի իրականացվում: Այս ուղղությամբ նոր գործողություններ նախատեսված չեն նաեւ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությամբ եւ դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրով:

«ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոնվենցիան» անդամ պետություններից պահանջում է խոշտանգումների եւ այլ դաժան վերաբերմունքի արգելքի վերաբերյալ դասընթացներ ապահովել իրավապահ մարմինների, բուժանձնակազմերի եւ այն բոլոր անձանց համար, որոնք առնչվում են ազատագրկման վայրերի աշխատանքին, հարցաքննություններին կամ որեւէ այլ կերպ՝ ազատագրված անձանց հետ: Խնդրի մասին բազմիցս են խոսել նաեւ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները: Նման առաջարկով էր հանդես եկել 2014թ.-ին հրապարակված իր հերթական զեկույցում նաեւ ՀՀ ՄԻՊ Կ. Անդրեասյանը: Չնայած զանազան ծրագրերի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նման դասընթացներ իրականացվել են, այնուամենայնիվ, դրանց շարունակական բնույթ հաղորդելու կարիք է զգացվում: Լավատեսություն է ներշնչում նաեւ այն, որ ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1978-Լ որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը եւ դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում նախատեսված է վերապատրաստումներ իրականացնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով՝ ոստիկանների, ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների, հոգեբուժական, երեխաների խնամքի հաստատությունների աշխատողների, քրեակատարողական ծառայության ծառայողների եւ բժշկական անձնակազմի համար: Սակայն, գործողություններ նախատեսված չեն խոշտանգումների արգելքի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացման ուղղությամբ, ինչն անհրաժեշտ է երեւոյթի նկատմամբ անհանդուրժողականություն ձեւավորելու համար:

Պետք է արձանագրել, որ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության եւ դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում նախատեսված են նաեւ գործողություններ, որոնք բխում են խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասով արդյունավետ քննության իրականացման եւ փաստաթղթավորման համընդհանուր սկզբունքները նախանշող «Ստամբուլյան արձանագրություններ»-ի տրամաբանությունից: Օրինակ՝ նախատեսվում է մշակել «Ֆիզիկական ուժեղ ցավ» եւ «հոգեկան տառապանք» եզրույթների մեկնաբանման եւ կիրառման վերաբերյալ ուղեցույցներ: Ակնկալվում է, որ այս գործողությամբ կնվազեն ոչ միայն նշյալ դեպքերի, այլեւ դրանց վերաբերյալ քրեական գործերի հարուցումը մերժելու կամ դրանք կարճելու վերաբերյալ անհիմն որոշումների թիվը: Չնայած կոնվենցիան հստակ սահմանում է, որ խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի բժշկական փաստաթղթագրումը կարելու է դատական վարույթում, մարդու իրավունքների ուսումնասիրությունների եւ մշտադիտարկման, ինչպես նաեւ խոշտանգումների գոհերի վերականգնողական աշխատանքների ամբողջ գործընթացում, այնուհանդերձ անհրաժեշտ է արձանագրել, որ մինչ այժմ ՀՀ-ում ապահովված չէ խոշտանգման և վատ վերաբերմունքի ենթարկված անձանց մարմնական վնասվածքների փաստաթղթավորումը՝ ըստ

«Ստամբուլյան արձանագրության» չափանիշների: Բացի այդ, պետությունը չի ապահովում վերականգնողական ծառայություններ խոշտանգման զոհերի համար:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության եւ դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում ՌՈՒ բաժիններում տեսախցիկների ակնկալվող տեղադրումը նպատակ է հետապնդում մի կողմից նվազեցնելու խոշտանգումների, մյուս կողմից՝ դատավարական գործողությունների իրականացման կարգի խախտմամբ ապացույցների ձեռք բերման դեպքերը: Բացի այդ, տեսաձայնագրությունները օգտագործվելու են որպես ապացույց՝ այդ դեպքերի վերաբերյալ քրեական գործերով: ՌՈՒ բաժիններում տեսախցիկների տեղադրման առաջարկ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները եւ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանն արել են դեռեւս 2014 թ.-ից սկսած: Այդ նույն թվականին հրապարակված զեկույցում, սակայն, ՄԻՊ Կ. Անդրեասյանը նաեւ նշել է, որ ՌՈՒ բերման ենթարկված անձանց հաշվառման մատյաններում եղել են ժամային էական խախտումներ եւ առաջարկել է վերահսկողություն սահմանել մեկուսարաններում առկա մատյանների պատշաճ կարգով լրացման եւ պահպանման ուղղությամբ: Այսինքն, մի կողմից, վկայի կամ կասկածյալի կարգավիճակում գտնվող ժամկետային զինծառայողների իրավունքների պաշտպանության ապահովման տեսակետից, նրանց մասնակցությամբ իրականացվող բոլոր քննչական գործողությունների պարտադիր տեսաձայնագրումն արդյունավետ միջոց կարող է հանդիսանալ, մյուս կողմից՝ նշված երաշխիքի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է ռազմական ոստիկանության տարածք ցանկացած կարգավիճակով մուտք գործող յուրաքանչյուր անձի պարտադիր գրանցման ապահովումը: Հակառակ պարագայում հնարավոր է իրավիճակ, երբ զինծառայողը կտարվի ռազմական ոստիկանություն առանց մատյանում գրանցում կատարելու, ժամեր շարունակ կենթարկվի խոշտանգման, ճնշումների եւ վատ վերաբերմունքի եւ միայն այդ գործողություններից հետո նոր կիրականացվի նրա գրանցումն ու, այնուհետ, կկազմակերպվի նրա «պաշտոնական» հարցաքննությունը, որն էլ՝ կտեսանկարահանվի: Այդ պարագայում քննչական գործողության նկարահանումը կկորցնի իր իմաստը:

Վերոնշյալ խնդիրներից զատ, հարկ է նշել, որ սույն զեկույցում ներկայացված վերլուծությունները ցույց են տալիս, որ զինված ուժերում գրանցված միջադեպերի առթիվ հարուցված քրեական վարույթների շրջանակներում որպես կասկածյալ եւ վկա կանչված/բերված անձանց խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովման տեսանկյունից գոյություն ունեն նաեւ ռազմական ոստիկանության կառուցվածքի եւ ենթակայության հետ կապված խնդիրներ, որոնք նույնիսկ օրենսդրական բացերի լրացման պարագայում կարող են խոցելի դարձնել անգամ իրավական ամենակատարյալ մեխանիզմը: Հինվորական հանցագործությունների գործերով հետաքննություն իրականացնող մարմինը չպետք է գտնվի այն գերատեսչության կառուցվածքում, որտեղ կատարված հանցագործությունները հետաքննելու է: Քանի որ ՌՈՒ-ն հանդիսանում է պաշտպանության նախարարության կառուցվածքային մաս՝ սեփական ծառայակիցների կողմից օրինախախտումների կամ ՋՈՒ սպայական անձնակազմի կողմից մարդու հիմնարար իրավունքների եւ ազատությունների ոտնահարման դեպքերը հետաքննելիս, բախում կարող է առաջանալ օրինականության ապահովման եւ գերատեսչական

Զինված ուժերում գրանցված միջադեպերի առթիվ հարուցված քրեական վարույթների շրջանակներում որպես կասկածյալ եւ վկա ռազմական ոստիկանություն բերված անձանց խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովումը

Ենթակայությամբ պայմանավորված կամ կորպորատիվ շահերի միջեւ:

Հիմնվելով վերեւում ներկայացված վերլուծությունների վրա՝ «ԶՈՒ-ում տեղի ունեցած հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթների շրջանակներում ներգրավված անձանց «Խոշտանգումների արգելում» իրավունքի ապահովումը» ծրագրի անձնակազմը մշակել է մի շարք առաջարկություններ, որոնք զետեղված են զեկույցի հաջորդ բաժնում:

ԶՈՒ-ում գրանցված միջադեպերի արդյունքում, քրեական վարույթների շրջանակներում որպես կասկածյալ եւ վկա ՌՌ բերված անձանց խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովմանն ուղղված առաջարկներ

Հիմնվելով «Եզրակացություններ» բաժնում ներկայացված միջազգային եւ ներպատական օրենսդրության, ինչպես նաեւ օրենսդրական մեխանիզմների պրակտիկ կիրառման հետ կապված խնդիրների վերլուծության վրա՝ ծրագրի անձնակազմը ԶՈՒ-ում գրանցված միջադեպերի արդյունքում հարուցված քրեական վարույթների շրջանակներում որպես կասկածյալ եւ վկա ՌՌ բերված անձանց խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովման, խոշտանգումների դեպքերի նվազեցման եւ, ընդհանուր առմամբ, ոլորտի բարելավման նպատակով պատրաստել է սույն առաջարկությունների փաթեթը:

Անհրաժեշտ է արձանագրել, որ ինչպես երեսում է վերը ներկայացված վերլուծությունից, զեկույցում վերհանված խնդիրների մի զգալի մասն արդեն գտնվում են ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում, ինչն, անշուշտ, կարելի է որպես դրական տեղաշարժ որակել: Դատելով ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1978-Լ որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության եւ դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի բովանդակությունից՝ խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի դրսևորումների դեմ պայքարն առաջնային խնդիր է դիտարկվում կառավարության կողմից: Տեղական եւ միջազգային իրավապաշտպան եւ պետական կառույցների միջեւ համագործակցության արդյունքում մշակված այս գործողությունների իրականացումը դրական ազդեցություն կարող է ունենալ ոլորտում առկա որոշ խորքային խնդիրների լուծման վրա: Նախանշվող փոփոխություններին հասնելու համար, սակայն, առաջնային նախապայման է հանդիսանում ոլորտի համար պատասխանատու բոլոր կառույցների կողմից հաստատականության եւ հետետղականության դրսևորումը:

Դեռեւս բազմաթիվ անելիքներ կան ՄԻԵԴ-ի կողմից կայացված վճիռների եւ դրանց կատարման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի որոշումներում բարձրացված խնդիրների լուծման ուղղությամբ: Զինված ուժերում տեղի ունեցած միջադեպերի վերաբերյալ ՀՀ դեմ կայացված ՄԻԵԴ-ի վճիռներն արդեն իսկ պարունակում են հստակ ցուցումներ՝ ուղղված խոշտանգումների արգելքի իրավունքի ապահովմանը Հայաստանում: Անհրաժեշտություն չհամարելով կրկնել այս վճիռներում եւ որոշումներում ներկայացված առաջարկություններն՝ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ դրանցում մատնանշված են այն բոլոր առաջնային խնդիրները, որոնք անհապաղ լուծում են պահանջում: Բացի այդ, ներպետական օրենսդրությունը եւ իրավակիրառ պրակտիկան բարելավելու եւ միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով, պետական մակարդակով լրջագույն կարելություն է տրվելու այլ հեղինակավոր միջազգային եւ տեղական իրավապաշտպան կազմակերպությունների կողմից բարձրացված խնդիրների լուծմանը: Վերոնշյալից զատ, ԶՌՈ-ում գրանցված միջադեպերի արդյունքում հարուցված քրեական վարույթների շրջանակներում որպես կասկածյալ եւ վկա ՌՌ բերված անձանց խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովման ուղղությամբ ծրագրի անձնակազմն առաջարկում է հետեւյալ գործողությունները:

1. ՀՀ քրեական օրենսգրքում քրեական պատասխանատվություն նախատեսել անմարդկային եւ նվաստացնող վերաբերմունքի դրսևորումների համար:
2. ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1978-Լ որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությամբ եւ դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված է խոշտանգման հանցանքի նկատմամբ օրենսդրորեն ամրագրել վաղեմության ժամկետի կիրառման սահմանափակումներ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկվելու արգելքի բացարձակ բնույթը եւ նման վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի հիմնարար նշանակությունն՝ անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել նաեւ, որ խոշտանգման, անմարդկային եւ/կամ նվաստացնող վերաբերմունքի համար մեղավոր ճանաչված անձինք չեն կարող համաներմամբ ազատվել քրեական պատասխանատվությունից: Այդ հիմքով քրեական հետապնդման դադարեցումն անհամատեղելի է նշված իրավունքը հարգելու եւ պաշտպանելու պետության պարտավորությունների հետ եւ հակասում է դրանց, քանի որ արդյունքում անտեսվում է մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու եւ դատապարտելու հանրային շահը, որն անվիճելի է ճանաչված նաեւ ՄԻԵԴ կողմից:
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխություն կատարելով՝ ամրագրել որպես վկա կամ կասկածյալ հրավիրվելու պահից զինձառայողի փաստաբան ունենալու պարտադիր իրավունքը:
4. Ռազմական ոստիկանության մասին օրենք»-ով կամ «Ռազմական ոստիկանության մասին ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքում կարգապահական վաշտերում եւ ՌՌ կայազորային մեկուսարաններում ռազմական ոստիկանության

ծառայողի համար սահմանված լիազորություններին ու պարտականություններին ավելացնել ձերբակալված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցնող զինծառայողի անվտանգության ապահովումը:

5. «Ռեզնական ոստիկանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու միջոցով տարանջատել ռազմական ոստիկանության կառուցվածքային ենթակայությունը պաշտպանական եւ օրինականության ու հանցագործությունների հետաքննության գործառույթների մասով:
6. Ապահովել վկայի կամ կասկածյալի կարգավիճակում գտնվող ժամկետային զինծառայողների մասնակցությամբ կատարվող բոլոր քննչական գործողությունների պարտադիր տեսաձայնագրումը, միեւնույն ժամանակ՝ վերահսկողության տակ վերցնել մեկուսարաններում առկա մատյանների պատշաճ կարգով լրացումն ու պահպանումը:
7. Ապահովել խոշտանգման և վատ վերաբերմունքի ենթարկված անձանց մարմնական վնասվածքների փաստաթղթավորումը «Ստամբուլյան արձանագրության» չափանիշների համաձայն:
8. Համակարգված եւ հետետողական մոտեցում ցուցաբերել խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի նկատմամբ հանրային անհադուրժողականության ձեւավորմանն ուղղությամբ՝ դեռեւս դպրոցական տարիքից: Նման անհանդուրժողականության հնարավոր է հասնել երկարաժամկետ կրթական եւ տեղեկատվական ծրագրերի միջոցով, որոնք կնպաստեն երեւոյթի մասին հանրային իրազեկվածության բարձրացմանը, ինչպես նաեւ երեւոյթի անթոյլատրելի լինելու գիտակցության ձեւավորմանը: Կրթական երկարաժամկետ ծրագրերի միջոցով հնարավոր կլինի նաեւ խրախուսել զինված ուժերում խոշտանգումների եւ այլ դաժան վերաբերմունքի դեպքերի մասին հաղորդումներ ներկայացնելու պրակտիկան, ինչի մասին նշված է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2014 թ.-ի զեկույցում: Երկարաժամկետ տեսանկյունից նման փոփոխության կարելի է հասնել, օրինակ, դպրոցական ծրագրերում «Մարդու իրավունքներ» առարկա ներառելու արդյունքում:
9. Խոշտանգման արգելքի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացման աշխատանքներ տանել զորակոչիկների շրջանում:
10. Հնարավորինս արագ ձեւավորել ՊՆ կայազորային մեկուսարանում հասարակական դիտորդների խումբն ու տեղական իրավապաշտպան կազմակերպություններին այդ խմբի աշխատանքներում ներգրավվելու հնարավորություն ընձեռել:
11. Վերականգնողական ծառայություններ մատուցել խոշտանգման զոհերին:



© 2020 Զեկույցը հրապարակվել է
«Խաղաղության երկխոսություն»
հասարակական կազմակերպության կողմից

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 2002, ք. Վանաձոր,
Մյասնիկյան 12, րն. 40, «ԻՄԵ» գրասենյակ

Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632

Էլ. փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am

Կայք՝ <http://www.peacedialogue.am>;
<http://www.safesoldiers.am>